


Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 05.07.2023թ. չորեքշաբթի թիվ 27-28 (1104-1105)

# Հուլիսի 5-ը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրն է

## Օրենքների օրենքը




Երկրի՝ իբրեւ ինքնիշխան եւ անկախ պետության, հատկանիշներն ընդհանրական են. տարածքային ամբողջականություն, բանակ, դրամ... չթվարկենք: Դրանցից մեկը կամ երկուսը կարող են եւ չլինել, բայց օրենքների օրենքը՝ **սահմանադրությունը,** պարտադիր եւ թերեւս ամենից հատկանշական տարրն է տվյալ երկրի ինքնուրույն գոյության: Նա է կարգավորում տվյալ երկրի իրավական հարաբերությունները ե՛ւ ներսում, ե՛ւ դրսում: Նա է տվյալ երկրի կառավարման, իշխանության օղակների, ինչպես նաեւ դրանց ու երկրի քաղաքացիների միջեւ հարաբերությունների, իրավունքների ու պարտականությունների սահմանողն ու ուղեցույցը:

Մեր օրենքների օրենքը քանիցս վկայել է իր առանձնահատուկ առաքելությունը՝ հատկապես երկրի համար օրհասական պահերին: Եվ հարկ է, որ մեր հասարակությունը լիարժեք պատկերացնի սահմանադրության դերը եւ պահանջվածի չափ ակնածանք դրսեւորի երկրի թիվ մեկ փաստաթղթի հանդեպ:

**Հայաստանի Հանրապետությունը**, որպես անկախ եւ ինքնիշխան պետություն, համաժողովրդական **հանրաքվեով** իր **Սահմանադրությունն** ընդունեց **1995թ. հուլիսի 5-ին** (այդ օրն ընդմիշտ կմնա իբրեւ տոն): 10 տարի անց՝ 2005 թ. նոյեմբերի 27-ին, նոր զարգացումների արդյունքում հանրաքվեով ընդունվեց **Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին օրենքը**: Պետականաշինության հետագա ընթացքը հանգեցրեց նոր փոփոխությունների անհրաժեշտության: Եվ ահա, եւս 10 տարի անց՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունվեցին **Սահմանադրական** նոր **փոփոխությունները.** երկիրը թեւակոխեց պետական շինարարության նոր փուլ՝ պետական կառավարման նախագահական համակարգից անցում կատարելով դեպի խորհրդարանական կառավարման համակարգ:

Բնական եւ տրամաբանական մի ընթացք, որ հատուկ է բոլոր զարգացող երկրներին, դեպի կատարելագործում ձգտող բոլոր հասարակություններին: Չքաղաքականացնենք: Ոչ նսեմացնենք, ոչ էլ գերագնահատենք: Համարենք մեզ համար արդեն շատ սովորական մի երեւույթ, որը կարող է կրկնվել ժամանակ առ ժամանակ: Եվ հիշենք, որ Սահմանադրությունը ոչ այնքան **պարտադրում**, որքան **հնարավորություն** է տալիս... Իսկ քաղաքականությունը հենց հնարավորի՛ց օգտվելու արվեստն է:

Քաղաքականությունն ունի միայն մեկ բարոյականություն՝ **հայրենասիրությունը,** եւ մեկ գերչափանիշ՝ **ազգային շահը,** մնացյալ ողջ ներկապնակն ածանցյալ է այս երկուսին: Նաեւ՝ օրե՛նքն է **մարդու** համար, նույնիսկ օրենքների օրենքը՝ **սահմանադրությունը,** եւ ոչ երբեք՝ հակառակը: Մեր Սահմանադրությունը, իբրեւ մեր ինքնիշխանության իրավական վավերագիր եւ գերագույն օրենք, ինչպիսի ձեւակերպումներով էլ որ ժամանակ առ ժամանակ հավելվի, միեւնույնն է, ածանցյալ է **երկրին** եւ ծառայեցվելու է ազգային շահին, եթե միայն մեր քաղաքականությունը մնա իր բարոյականության (հայրենասիրության) շրջանակներում, իսկ հակառակից (դավաճանությունից) Աստված մեզ հեռու կպահի:

**Այսօր Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրն է:**

Եթե Դու **երկիր** ես, ունես Քո՛ **անկախ պետությունը**, ուրեմն ունես նաեւ Քո՛ **սահմանադրությունը... Փա՜ռք Աստծո**:

Եթե Դու ունես Քո՛ սահմանադրությունը եւ ժամանակի թելադրանքով դրանում կատարում ես **փոփոխություններ**, ուրեմն Դու **զարգանում ես** բոլոր ուղղություններով... **Փա՜ռք Աստծո**:

Եթե Դու զարգանում ես բոլոր ուղղություններով, ուրեմն մոտենում ես Քո հարցերի ու դրանց մեջ՝ Քո հարցերի հարցի՝ **Հայկականի՜** լուծմանը... **Տա՛ Աստված,** որ Քո սահմանադրության մեջ հաջորդ փոփոխությունների անհրաժեշտությունը բխի Քո հզորացող երկրի վարչատարածքային **ընդարձակումների՛** թելադրանքով:

***Գ.Մ.***

### Օհան Դուրյան-100

## Գեղեցիկ դադարից առաջ

*«Մոսկվա»* կինոթատրոնում կայացել է աշխարհահռչակ դիրիժոր Օհան Դուրյանի 100-ամյա հոբելյանին նվիրված՝ *«Գեղեցիկ դադարից առաջ. Օհան Դուրյան»* լիամետրաժ փաստագրական ֆիլմի պրեմիերան:

Ֆիլմի փակ դիտումը կայացել էր 2022 թվականի տարեվերջին: Ֆիլմի պրեմիերային ներկա են եղել ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը**՝ տիկնոջ՝ **Աննա Հակոբյանի** հետ, ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանը,** ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արա Խզմալյանը,** բարձրաստիճան այլ անձինք, արվեստագետներ, հյուրեր:

Մինչ ցուցադրությունը տեղի է ունեցել ֆիլմի պրեմիերային նվիրված մամուլի ասուլիս, որի բանախոսներն էին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյա հոբելյանական հանձնաժողովի անդամ եւ Դուրյան ընտանիքի բարեկամ **Վահան Վարդապետյանն** ու ֆիլմի ռեժիսոր **Հայկ Օրդյանը:**

***շարունակությունը՝ էջ 2***

### Համահայկական

## Առանձնակի կարեւոր վերապատրաստումներ

Տեղի է ունեցել 2023 թ. սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի պաշտոնական բացման արարողությունը, որին մասնակցել է նաեւ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը:**

Նախարարը շնորհավորել է մանկավարժներին՝ ծրագրի մեկնարկի կապակցությամբ եւ մաղթել հաջող ընթացք. *«Մենք առանձնակի կարեւորում ենք սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը՝ Հայաստան-սփյուռք փոխհամագործակցության համատեքստում եւ փորձում առավելապես օգտակար լինել ձեր կատարած աշխատանքին: Նախարարության գերակա ուղղություններից են նոր կրթական չափորոշիչներին համապատասխան որակյալ եւ արդյունավետ կրթության կազմակերպումը եւ օտարերկրյա պետություններում հայերենի գրավչության բարձրացումը, հայկական մշակույթի եւ ավանդույթների հանրահռչակումը»:*

***շարունակությունը՝ էջ 3***

### Մայր Աթոռ

## Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսումնական տարվա փակումը

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ճեմարանի՝ 2022-2023 ուսումնական տարվա փակման հանդիսությունը:

Միջոցառումը սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՀ եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի օրհներգերը:

Այնուհետեւ ներկաներին ողջունեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ **Տեր Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը:**

***շարունակությունը՝ էջ 4***

### *Այս համարում*

● *Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման* ***հարցաշարը*** *(սկիզբ)*

տե՛ս՝ ***էջ 9-20***

Աշխարհի հետ

## Նախարարների հանդիպումը Փարիզում

Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին մասնակցելու նպատակով Փարիզում գտնվող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** հանդիպել է Ֆրանսիայի մշակույթի նախարար **Ռիմա Աբդուլ-Մալաքին:**



Հանդիպմանը քննարկվել են մշակութային ժառանգության, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանության, Լուվրում նախապատրաստվող ուրարտական ցուցահանդեսի, առաջիկայում Ֆրանսիայում կայանալիք Մարտիրոս Սարյանի եւ Մինաս Ավետիսյանի ստեղծագործությունների ցուցադրությունների, ինչպես նաեւ համատեղ կինոարտադրության եւ օպերային թատրոնի հյուրախաղերի վերաբերյալ մի շարք հարցեր:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ Շարլ Ազնավուրի 100-ամյակի միջոցառումների կազմակերպման թեմային:

Կողմերը քննարկել են երկու երկրների արվեստի գործիչների միջեւ փոխանակման ակտիվացմանը միտված մի շարք հարցեր՝ դրանցում հատկապես ընդգրկելով երիտասարդներին:

Աշնանը նախատեսվում է Ֆրանսիայի մշակույթի նախարար Ռիմա Աբդուլ-Մալաքի այցը Հայաստան:

Թարգմանչաց

## Ծրագրերը պետք է լինեն նպատակային

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանն** այսօր հանդիպել է գրական ոլորտի ներկայացուցիչների՝ գրողների, թարգմանիչների եւ գրականագետների հետ:

Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արա Խզմալյանը** եւ մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ **Աստղիկ Մարաբյանը:** Հանդիպման առիթը նախարարության գրահրատարակչության ոլորտի *«Թարգմանական ծրագրեր եւ աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին»* դրամաշնորհային ծրագիրն էր, որը տրվում է պետության կողմից:

Նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկաներին՝ նշելով, որ ստեղծագործական, հետազոտական եւ թարգմանական աշխատանքների համար տրամադրվող աջակցության ծրագրերը գրողին, հետազոտողին եւ թարգմանչին պետք է հնարավորություն տան կտրվելու առօրյա հոգսերից եւ կենտրոնանալու իրենց աշխատանքների վրա:

*«Կարեւոր է, որ ստեղծագործական, հետազոտական եւ թարգմանական աշխատանքներին ուղղված աջակցության ծրագրերը լինեն նպատակային: Պետության կողմից տրվող աջակցությունը պետք է նաեւ խրախուսի հրատարակչական գործունեության զարգացումը»,-* ասել է նախարարը:

Նա նաեւ կարեւորել է հայ հեղինակների աշխատանքների թարգմանությանն ու հանրահռչակմանն ուղղված պետական մոտեցումը. *«Պետք է թիրախավորել եւ ընտրել թարգմանությունների համար այնպիսի լեզուներ, որոնք ավելի մեծ լսարան կկարողանան ապահովել»:*

Հանդիպման ընթացքում ոլորտի ներկայացուցիչները հանդես են եկել առաջարկություններով, ներկայացրել իրենց մտահոգությունները:

## Գեղեցիկ դադարից առաջ

***սկիզբը՝ էջ 1***



ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը տեղեկացրել է, որ անցյալ տարի ձեւավորվել է Օհան Դուրյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական հանձնաժողով, որի շրջանակում էական եւ մնայուն մի շարք միջոցառումներ են իրականացվելգ *«Դրանք, ըստ էության, հավերժացրին Օհան Դուրյանի անունը մեր քաղաքում եւ, ընդհանրապես, մեր կյանքում: Ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել հիմնական գաղափարների հեղինակ Վահան Վարդապետյանին, որը հետեւողականությամբ, ամեն դետալը մշակած եւ պատշաճ մակարդակով անցկացրեց բոլոր միջոցառումները: Այսօր որոշակի հանգրվանային փուլում ենք. քաղաքում ունենք Օհան Դուրյանի հուշարձան, ռադիոյում պահպանվող նրա երաժշտական ժառանգությունը թվայնացված եւ թողարկված է: Այդ ձայնագրություններն ու խտասկավառակները հաճույքով բաժանում ենք ամբողջ աշխարհում: Դուրյանն այն դիրիժորն ու երաժիշտն էր, որը փայլուն գիտակցում եւ տիրապետում էր եվրոպական երաժշտական արվեստին, հասկանում բոլոր այն փոխակերպումները, որոնք տեղի էին ունենում դասական երաժշտության բնագավառում: Մեր դիրիժորական դպրոցը եւ երաժշտական արվեստն անհնար է պատկերացնել՝ առանց նրա անվան, եւ հոբելյանական միջոցառումներն ինչ-որ իմաստով նպատակ ունեին հերթական անգամ փաստելու այդ հանգամանքը եւ վերաիմաստավորելու նրա տեղն ու դերը մեր երաժշտական մշակույթում»:*

Արա Խզմալյանը շնորհակալություն է հայտնել նաեւ ֆիլմի ռեժիսոր Հայկ Օրդյանին. *«Ենթադրում եմ, որ ֆիլմն ավելին է լինելու, քան զուտ Օհան Դուրյանի անցած ուղին եւ կյանքը, որովհետեւ նա իր կենսագրության մեջ ամփոփում է այդ ժամանակների բոլոր հակասությունները՝ հասարակական, քաղաքական, կյանքն իր բոլոր վայրիվերումներով, բարդություններով եւ խիզախումներով՝ բարոյական եւ քաղաքացիական»:*

Ասուլիսի բանախոս Վահան Վարդապետյանի խոսքով՝ իր մտահղացումները չէին կարող կյանքի կոչվել, եթե չլիներ հոբելյանական կառավարական հանձնաժողովի աջակցությունը: *«Երախտապարտ եմ հանձնաժողովին՝ այս ամենը մեր ժողովրդի սեփականությունը դարձնելու համար, ինչպես նաեւ ԿԳՄՍ նախարարությանը՝ շատ կարեւոր եւ արժեքավոր արխիվային նյութերի հայթայթման ու տրամադրման համար: Շնորհակալ եմ նաեւ ֆիլմի ռեժիսորին եւ ստեղծագործական հիանալի խմբին՝ իմ մտքերն իրականություն դարձնելու, ինչպես նաեւ հանդուրժելու իմ խստապահանջությունն ու բծախնդրությունը: Ֆիլմը քարոզում է համամարդկային արժեքներ, եւ ես վստահ եմ, որ մեր երկրի սահմաններից դուրս եւս այն կգնահատվի: Ֆիլմի երաժշտական ձեւավորումն այնքան ճիշտ է արվել, որ անհնար է այն դիտելուց հետո չդառնալ դասական երաժշտության երկրպագու»,-* նշել է Վահան Վարդապետյանը՝ տեղեկացնելով, որ ֆիլմի ցուցադրության համար արդեն հրավեր են ստացել Գերմանիայից եւ Ֆրանսիայից:

Այդ համատեքստում նախարարի տեղակալ Արա Խզմալյանը հավելել է, որ ֆիլմը պետք է անպայման ցուցադրել ոչ միայն արտերկրում, այլ նաեւ ՀՀ մարզերում եւ համայնքներում:

Ֆիլմի ռեժիսոր Հայկ Օրդյանը ներկայացրել է նկարահանումների լայն աշխարհագրությունը՝ Երեւան, Երուսաղեմ, Լայպցիգ, Փարիզ, Մոսկվա եւ Քեյփ Թաուն. *«Ի սկզբանե գիտեինք Մաեստրոյի մեծությունն ու համաշխարհային կերպարը եւ հասկանում էինք՝ չենք կարող սահմանափակվել միայն ներհայաստանյան մոտեցումներով՝ ներկայացնելու նրա ստեղծագործական ուղու գոնե մի մասը: Որպես ռեժիսոր՝ այս ֆիլմն իմ կենսագրության մեջ իր ուրույն ու շրջադարձային տեղն ունի: Իհարկե, էկրանն է ցույց տալու, թե ֆիլմը որքանով է հաջողված, եւ հանդիսատեսն արդյոք կընդունի այն, սակայն կարող եմ փաստել՝ կատարել ենք նրբանկատ, խորը եւ երկար աշխատանք՝ փորձելով ինչ-որ կերպ ներկայացնել Մաեստրոյի իրական կերպարը»:*

Նշենք, որ ֆիլմում փորձ է արվել համադրել եւ ի մի բերել դուրյանական արվեստի ողջ ներկապնակը, ամփոփ ներկայացնել մեծ դիրիժորի կյանքի ամենադրամատիկ եւ նշանակալի դրվագները:

Օհան Դուրյանը ղեկավարել է աշխարհի ավելի քան 110 նվագախմբեր, որոնց թվում են Լայպցիգի աշխարհահռչակ Գեւանդհաուսը, Բեռլինի, Դրեզդենի, Վիեննայի, Փարիզի, Ավինիոնի նվագախմբերը:

Կինոպատումն ունի լայն աշխարհագրություն՝ Երեւան, Երուսաղեմ, Լայպցիգ, Փարիզ, Մոսկվա եւ Քեյփ Թաուն. սա Մաեստրոյի ստեղծագործական ուղու ընդամենը մի մասն է, որն անցնում ենք նորից՝ նպատակ ունենալով պահոցներում գտնել Դուրյանին նվիրված նյութեր, Մաեստրոյին գնահատող եւ նրա արվեստով հիացած մարդկանց:

Առաջին անգամ փորձ է արվում մանրամասն ներկայացնել նաեւ Օհան Դուրյանի հասարակական գործունեությունը, անարդարություն չհանդուրժող եւ ընդվզող կերպարը:

Ֆիլմը ստեղծվել է Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյա հոբելյանական հանձնաժողովի հաստատած միջոցառումների շրջանակում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ: Այն նկարահանել է *«Օրդեր ֆիլմ փրոդաքշնը»*՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության հետ համագործակցությամբ:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

## Յոթ մասնակից, յոթ մեդալ



Կիրառական կենսաբանության միջազգային օլիմպիադայում Հայաստանը ներկայացնող աշակերտներն արժանացել են 4 ոսկե, 1 արծաթե, 2 բրոնզե մեդալներ:

Կիրառական կենսաբանության միջազգային օլիմպիադան կայացել է հունիսի 25-28-ը Ինդոնեզիայում: Հայաստանը ներկայացնող յոթ դպրոցականներն էլ հաղթահարել են կիսաեզրափակիչ փուլը եւ եզրափակիչ փուլում գրանցել հետեւյալ արդյունքները.

**Տաթեւ Սիմոնյան**՝ Քվանտ վարժարան, ոսկե մեդալ, Օլիմպիադայի ամենամեծ մրցանակ (Grand award), **Հակոբ Պերիխանյան**՝ Ա. Շահինյանի անվան Ֆիզմաթ դպրոց, ոսկե մեդալ, Հատուկ մրցանակ կենսաբանական կոնցեպտի համար, **Խոսրով Ցականյան**՝ Քվանտ վարժարան, ոսկե մեդալ, **Անի Իսրաելյան**՝ Արմավիրի թիվ 1 դպրոց, ոսկե մեդալ, **Լենա Մանուկյան**՝ Հերացի ավագ դպրոց, արծաթե մեդալ, **Կամունի Աբրահամյան**՝ Քվանտ վարժարան, բրոնզե մեդալ, **Մարիամ Դոխոյան**՝ Հերացի ավագ դպրոց, բրոնզե մեդալ:

«Դպրոցական սննունդ»

# Ծրագիրն ազգայնացվել է

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ) ՀՀ կառավարությանն է փոխանցել *«Կայուն դպրոցական սնունդ»* ծրագրի հետագա կառավարումը եւ իրականացումը:

*«Դպրոցական սնունդ,* ծրագիրը, որն ավելի քան 13 տարի գործընկերների համագործակցությամբ իրականացվում էր ՀՀ մարզերում, այսուհետ ամբողջությամբ կկատարվի պետական բյուջեի միջոցներով:

Ծրագրի փոխանցման հանդիսավոր միջոցառմանը մասնակցել եւ ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը:**



Միջոցառմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը,** Երեւանի քաղաքապետի պաշտոնակատար **Լեւոն Հովհաննիսյանը,** ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի մշտական համակարգողի պաշտոնակատար **Նիլս Սքոթը,** ՊՀԾ հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ եւ տնօրեն Նաննա Սկաունը, Հայաստանում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան **Սերգեյ Կոպիրկինը,** ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի նախագահ **Վլադիմիր Չերնիգովը,** ինչպես նաեւ ՀՀ այլ բարձրաստիճան ներկայացուցիչներ միջազգային եւ պետական տարբեր կառույցներից:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, շնորհավորելով ներկաներին, նշել է, որ ամփոփվում է կատարված մեծ աշխատանքը, որով նաեւ հետագա անելիքների նոր փուլ է ազդարարվում: Նախարարի խոսքով՝ վերջին երկու տասնամյակների ընթացքում *«Դպրոցական սնունդը,* Հայաստանում սոցիալական պաշտպանության փորձնական ծրագրից վերածվել է մարդկային կապիտալի զարգացման հարթակի՝ խթանելով կրթության որակի բարելավումը եւ առողջ ապրելակերպը: Նա շնորհակալություն է հայտել գործընկերներին արդյունավետ համագործակցության համար եւ փաստել՝ ՀՀ-ում իրականացվող *«Դպրոցական սնունդը»* ծրագիրը կարող է մոդել եւ լավ օրինակ դառնալ այլ երկրների համար:

*«Շատ կարեւոր է, որ ըստ պլանավորվածի՝ ավարտել ենք ծրագրի ամբողջական փոխանցումը պետությանը. 2023 թվականի հունվարից ՀՀ 10 մարզերի 1-ից 4-րդ դասարանների 100 հազարից ավելի երեխաներ սնունդ ստանում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Մենք, բնականաբար, կարիք ունենք զարգացնելու մեր ունեցած արդյունքները. մասնավորապես՝ ծրագրի մաս չի կազմում Երեւանը, եւ քննարկում ենք մայրաքաղաքի դպրոցները եւս ծրագրում ներառելու հարցը, ինչը թույլ կտա շուրջ 50 հազարով մեծացնել ծրագրի շահառու երեխաների թիվը: Կարծում եմ՝ հաջորդ տարի արդեն կսկսենք Երեւանի դպրոցները ծրագրում ներառելու գործընթացը»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

ԿԳՄՍ նախարարը նաեւ ընդգծել է, որ ծրագրի նպատակը միայն երեխաներին տաք սննդով ապահովելը չէ. այն ունի նաեւ շատ կարեւոր այլ բաղադրիչ՝ թույլ է տալիս դպրոցի շուրջ միավորել համայնքի ջանքերը՝ առողջ սնունդը եւ ապրելակերպը դպրոցական բաղադրիչում ներառելու եւ դրա միջոցով հանրային վարքականոն ձեւավորելու տեսանկյունից: Ծրագիրը ներառվել է *«Առողջ ապրելակերպ»* դասընթացի շրջանակում, եւ երեխաները նաեւ սովորում են առողջ եւ ճիշտ սնվել, գործնական ուսուցում եւ տեսական դասընթաց անցնում:

Նախարարի խոսքով՝ գնաճով պայմանավորված՝ որոշակի վերանայումներ է իրականացվել, եւ ճաշացանկում կատարվել է փոփոխություն. *«Դպրոցական ճաշացանկում 20 հիմնական սննդամթերք է ներառված, երկշաբաթյա ճաշացանկ է հաստատվում՝ հենց այդ 20 սննդամթերքի օգտագործմամբ»:*

***շարունակությունը՝ էջ 6***

Աշխարհի հետ

# Հրաժեշտի հանդիպում ՀՀ-ում Իրանի դեսպանի հետ

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Աբբաս Բադախշան Զոհուրիին,** որն ավարտում է իր առաքելությունը Հայաստանում:

Նախարարը, ողջունելով դեսպանին, շնորհակալություն է հայտնել պաշտոնավարման ընթացքում հայ-իրանական հարաբերությունների ամրապնդման ու համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ներդրած ջանքերի համար եւ մաղթել հաջողություններ հետագա աշխատանքային գործունեության մեջ:

Ժաննա Անդրեասյանը հանդիպման ընթացքում վերահաստատել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատրաստակամությունը՝ շարունակելու աջակցել կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության բնագավառներում հայ-իրանական բարեկամական հարաբերությունների զարգացմանն ու խորացմանը:



Անդրադառնալով համատեղ իրականացվող ծրագրերին՝ ԿԳՄՍ նախարարը հատկապես կարեւորել է Իրանի աջակցությունը՝ ուղղված ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում պարսկերենի ուսուցման խորացման ծրագրի ընդլայնմանը, որը նպաստում է դպրոցներում պարսկերենի դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Վերահաստատելով համատեղ ծրագրերը շարունակելու պատրաստակամությունը՝ նախարարը խոսել է գործող ծրագրերի շարունակականության եւ զարգացման մասին:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին ընդգծել է, որ իրանական կողմը պատրաստ է ընդլայնել համագործակցության շրջանակը: Նա նշել է, որ հատկապես կրթության եւ մշակույթի ոլորտներում համագործակցությունը կարեւոր ուղղություններից է:

Կողմերը քննարկել են Հայաստանի եւ Իրանի միջեւ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի ու երիտասարդության ոլորտներում հարաբերությունների առավել ամրապնդմանը, տարբեր բնագավառներում համագործակցության օրակարգի ընդլայնմանն ու զարգացմանը վերաբերող մի շարք հարցեր:

# Առանձնակի կարեւոր վերապատրաստումներ

***սկիզբը՝ էջ 1***

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է *«ՀՀ կրթության զարգացման՝ մինչեւ 2030 թ. պետական ծրագրին»՝* ընդգծելով սփյուռքում հայեցի կրթության կազմակերպման խնդիրը. *«Մեր ռազմավարության առանցքային նպատակներից են՝ սփյուռքի համար ՀՀ հանրակրթությանը համահունչ կրթական մատչելի ծառայությունների ապահովումը, սփյուռքում գործող հայկական կրթօջախները Հայաստանի կրթական համակարգին ինտեգրումը, սփյուռքահայ կրթօջախների կարիքներին համապատասխան հայալեզու տպագիր եւ էլեկտրոնային ուսումնական պաշարների համալրումը, սփյուռքում ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման եւ խրախուսման մեխանիզմների ստեղծումը»:*

Նախարարը վստահություն է հայտնել, որ համատեղ գործունեությունը էլ ավելի արդյունավետ կդարձնի իրականացվող աշխատանքները, իսկ այս տարվա վերապատրաստումը մեկ անգամ եւս բոլորին կհամախմբի ընդհանուր նպատակների շուրջ՝ ստեղծելով զարգացման նոր հնարավորություններ:



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն իրականացնում է սփյուռքում գործող հայկական եւ հայկական բաղադրիչով ուսումնական հաստատություններում (պետական եւ ոչ պետական վարժարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, լրացուցիչ կրթության հաստատություններ, մեկօրյա կրթօջախներ, մշակութային կենտրոններ եւ այլն) դասավանդողների վերապատրաստման ծրագիրը:

2023 թ. վերապատրաստման ծրագրին մասնակցում է 60 ուսուցիչ՝ 18 երկրից: Դասընթացները կանցկացվեն մինչեւ հուլիսի 29-ը:

Վերապատրաստումը կընթանա ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած տարբերակված մեկամսյա հետեւյալ 7 ծրագրով՝

- *Ուսուցում մանկապարտեզում*
- *Ուսուցում մեկօրյա դպրոցում*
- *Տարրական ուսուցում*
- *Հայոց լեզվի եւ գրականության դասավանդում*
- *Հայոց պատմություն եւ մշակույթի պատմություն*
- *Պարարվեստ*
- *Տնօրենների վերապատրաստում*

Դասընթացներն ավարտած ուսուցիչներին կտրամադրվեն ՀՀ ԿԳՄՍ նախարարության վկայագրեր:

Ընդհանուր առմամբ՝ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիրն ունի նոր գիտելիքի փոխանցման եւ կարողությունների ձեւավորման նպատակ: Այն ուղղված է նաեւ անձնական մակարդակում ուսուցչի մոտիվացիայի բարձրացմանը, առարկայի հանդեպ հետաքրքրության աշխուժացմանը, սփյուռքի կրթական համակարգի հետ կապերի ամրապնդմանը:

Մայր Աթոռ

# Վեհափառն ընդունեց ԵՊՀ Արեւելագիտության ֆակուլտետի շրջանավարտներին

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Երեւանի պետական համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետի շրջանավարտ ուսանողներին եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ գլխավորությամբ ֆակուլտետի դեկան պրոֆեսոր **Ռուբեն Մելքոնյանի:**

Տիար Մելքոնյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ներկայացրեց ֆակուլտետի այս տարվա ձեռքբերումները եւ ընդգծեց, որ շրջանավարտ ուսանողներն իրենց ձեռք բերած գիտելիքներով օգտաշատ ծառայություն կբերեն հայրենի պետությանը եւ հայ ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհավորելով շրջանավարտներին, մաղթեց նրանց արդյունավոր գործունեություն եւ նորանոր հաջողություններ:

Վեհափառ Հայրապետը ներկաներին շնորհավորեց նաեւ Արեւելագիտության ֆակուլտետի հիմնադրման 55-ամյակի առիթով՝ կարեւոր նկատելով ֆակուլտետի առաքելությունը հարեւան ժողովուրդների եւ երկրների անցյալի, ներկայի, մշակութային ժառանգության ու հայ ժողովրդի հետ առնչությունների ուսումնասիրության ուղղությամբ մասնագետների պատրաստման գործում:

Հայոց Հովվապետը գոհունակությամբ արձանագրեց, որ Արեւելագիտության ֆակուլտետում ուսում եւ կրթություն ստացած շրջանավարտները կարեւոր ներդրում են ունեցել պետականաշինության եւ Մերձավոր Արեւելքի շատ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների արդյունավորման եւ բարի դրացիական կապերի ձեւավորման գործում: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ֆակուլտետի շրջանավարտներին հայրենասիրական ոգով, ազգային արժեքների նկատմամբ մեծագույն նախանձախնդրությամբ, գիտական նոր ուսումնասիրություններով իրենց մասնագիտության շրջանակներում նպաստեն հայրենիքի զարգացմանն ու առաջընթացին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց Մայր Աթոռի եւ Արեւելագիտության ֆակուլտետի միջեւ առկա փոխգործակցությանը՝ ընդգծելով, որ ֆակուլտետի շրջանավարտները դասավանդել են նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, ինչը եւս կապեր է ձեւավորել ապագա եկեղեցականների եւ արեւելագետ երիտասարդների միջեւ:



Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց շրջանավարտների հարցերին, որոնք վերաբերում էին Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության եւ համաշխարհայնացման պայմաններում ազգային ինքնության պահպանմանն ուղղված Մայր Աթոռի ջանքերին, ինչպես նաեւ հայ-իրանական հարաբերություններում Հայ Եկեղեցու դերակատարությանը:

# Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսումնական տարվա փակումը

*սկիզբը՝ էջ 1*

Հայր Սուրբը, անդրադառնալով ճեմարանի անցնող ուսումնական տարվան, ընդգծեց, որ ճեմարանն անմասն չմնաց հայրենիքին ու հայ ժողովրդին փոթորկող հույզերից ու մարտահրավերներից՝ աղոթեց, որ Փրկիչն իր ամենախնամ աջի ներքո պահի Հայոց եկեղեցին եւ հավատավոր հայ ժողովրդի զավակներին, հեռու ամեն չարից ու փորձություններից:

*«Հիրավի, մեկուկես դար շարունակ հույսով եւ ապագայի վառ տեսիլքով փայլող ճեմարանն այլ կերպ չի էլ կարող գոյել. ճեմարանի եւ ճեմարանականների համար չհավատալ հույսի ու սիրո հաղթանակին նշանակում է անհավատարիմ լինել այն մեծ ու փառապանծ ավանդին, որ 1874 թվականից եւ դեռ դրանից էլ առաջ մեզ են հանձնել Մաղաքիա Օրմանյանները, Կոմիտասները, Կարապետ Տեր-Մկրտչյանները, Գեւորգ Չորեքչյանները, Գարեգին Հովսեփյանները, եւ դեռ շատ ու շատ մեծանուն ճեմարանականներ, ընդհուպ մինչեւ մեր օրեր... Չհուսալ եւ չհավատալ, որ այս նշանավոր անունները կրկին ծնունդ են առնելու եւ մարմնանալու ճեմարանի սաների մեջ, կնշանակի թողնել հոգեւոր արթնության եւ զգոնության խրամատը՝ թիկունք դարձնելով թշնամուն ու փախչելով տիրավանդ առաքելությունից: Չէ որ պատվեր ունենք Սուրբ Պողոս առաքյալից. «Զհոգին մի՛ շիջուցանէք» (Ա Թես. 5:19)»*,- ասաց Հայր Շահեն՝ հավելելով նաեւ, որ ճեմարան ոտք դրած սանը մեծ տեսիլքի զավակն է, այն նույն տեսիլքի, որով մեր հավատի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը կերտեց Սրբություն Սրբոց Էջմիածինը, Սուրբ Սահակն ու Սուրբ Մեսրոպը հայատառ դարձրին Աստվածաշունչը՝ լուսավորելով հայոց սրտերն ու մտքերը, Սուրբ Վարդանանք նահատակաց արյունով ներկեցին հայոց հերոսամարտերի գրքի առաջին էջերը, մեծանուն ու քրիստոնասեր թագավորները զորացրին ու շենացրին մեր հայրենիքը, աստվածուսույց վարդապետները երկնեցին մեր անգին ձեռագիր մատյանները, լուսավորչաշավիղ մեր հայրապետները առաջնորդեցին հայ ժողովրդին հոգեւոր ու մարմնավոր պատերազմներում:

Իր խոսքում տեսուչ Հայր Սուրբը բարի եւ օրհնյալ ծառայություն մաղթեց ճեմարանի շրջանավարտ սարկավագներին՝ հայցելով, որ Աստծո ամենախնամ աջը միշտ ուղղորդի եւ նրանց մեջ պահի առաքելական քարոզության նախանձախնդրությունը, հոգեւոր մշակի աննահանջ աշխատասիրությունը եւ սերը Աստծո, Սուրբ Եկեղեցու եւ հայ ժողովրդի նկատմամբ:

Վերջում Հայր Սուրբն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին ճեմարանի նկատմամբ ցուցաբերվող հայրական հոգածության եւ ուշադրության, ինչպես նաեւ հանուն ճեմարանի տեսչության՝ շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռի միաբանությանը, ճեմարանի ուսուցչական-դասախոսական կազմին իրենց նվիրյալ աշխատանքի ու ճեմարանի հանդեպ ցուցաբերած պատասխանատու եւ գիտակից վերաբերմունքի համար:

Ապա հոգեւոր, ազգային երգերի կատարումներով եւ ասմունքով հանդես եկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբն ու սաները:

Դասախոսության անունից ներկաներին իր խոսքն ուղղեց բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լաուրա Ավագյանը,** իսկ ուսանողության անունից՝ ավարտական 6-րդ լսարանի սան Բարեշնորհ **Գեւորգ սարկավագ Մկրտչյանը:**

Հանդիսության ընթացքում տեղի ունեցավ ՀՀ ԶՈւ գնդերեց եւ արցախյան 44-օրյա պատերազմում հերոսաբար զոհված Բարեշնորհ Նարեկ սարկավագ Պետրոսյանի անվան մրցանակաբաշխություն: Եկեղեցու սոցիալական ծառայության լավագույն ծրագրերի ներկայացման համար դրամական խրախուսների արժանացան մի շարք ճեմարանականներ:

Կատարվեց նաեւ գեղեցիկ ավանդույթ դարձած նվիրաբաշխությունը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ **Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի** ձեռամբ ուսման մեջ բարձր առաջադիմություն արձանագրած Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի եւ Քահանայից պատրաստման լսարանի ուսանողներին հանձնվեցին պարգեւներ:

Միջոցառման վերջում ներկաներին իր հայրական պատգամն ու օրհնությունը բերեց Նաթան Սրբազանը:

Սրբազան Հայրը, ներկաներին փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական սերն ու օրհնությունը, ընդգծեց, որ ճեմարանում թրծվում է հոգեւոր Հայաստանի վաղվա սերունդը, հայ հոգու ինքնության պահապանը: Նաթան Սրնազանը նաեւ իր գնահատանքն ու երախտագիտությունը հայտնեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի, Քահանայից պատրաստման լսարանի տեսչական անձնակազմին եւ դասախոսներին, ովքեր ամենայն ջանք ի գործ են դնում լավագույն կրթություն ապահովելու ուսանողների համար:

Հանդիսությունը եզրափակվեց Նաթան Սրբազանի *«Պահպանիչ»* աղոթքով:

2022-2023 ուսումնական տարում ճեմարանն ավարտեց 19 սան:





Աշխարհի հետ

# Նախարարի հանդիպումները Փարիզում

Ֆրանսիա կատարած այցի շրջանակում ՅՈւՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում հունիսի 28-ին տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանի** հանդիպումը ՅՈւՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի մշակութային հարցերով տեղակալ **Էռնեստո Օտտոնեի** հետ:

Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արայիկ Խզմալյանը,** ՅՈւՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ **Քրիստիան Տեր-Ստեփանյանը,** ժամանակակից արվեստի վարչության պետ **Սվետլանա Սահակյանը,** ՅՈւՆԵՍԿՕ-ի մշակույթի ոլորտի կոնվենցիաների կիրարկումն ապահովող աշխատակազմը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Նախարարը վերահաստատել է Հայաստանի աջակցությունը *«Մոնդիակուլտ 2022»* համաժողովի եզրափակիչ հռչակագրի դրույթներին, ինչպես նաեւ ՅՈւՆԵՍԿՕ-ի կողմից մշակվող Մշակույթի եւ գեղարվեստական կրթության զարգացման փաստաթղթին: Կարեւորվել են նաեւ մշակութային եւ լեզվական բազմազանության հարցերը, ՅՈւՆԵՍԿՕ-ի ֆրանկոֆոն խմբի գործունեությունը: Քննարկման ընթացքում նախարարը հատուկ անդրադարձ է կատարել Լեռնային Ղարաբաղում եւ հարակից տարածքներում Ադրբեջանի կողմից հայկական մշակութային եւ կրոնական ժառանգության ոչնչացման եւ ինքնության աղավաղման հարցերին, այդ թվում՝ Սուրբ Համբարձում եկեղեցին մզկիթի վերածելու մասին անցյալ շաբաթ հայտնի դարձած Ադրբեջանի ծրագրերին: Ներկայացվել է հայկական կողմի խոր մտահոգությունը Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության կողմից մշակութային եւ մարդու հիմնարար իրավունքներն իրացնելու հնարավորության բացակայության կապակցությամբ: Շեշտվել է նաեւ, որ շրջափակման հետեւանքով խախտվում է նաեւ արվեստագետների շարժունության սկզբունքը: Այս կապակցությամբ մեկ անգամ եւս կարեւորվել է Լեռնային Ղարաբաղ եւ Հայաստանի սահմանամերձ տարածքներ ՅՈւՆԵՍԿՕ-ի անկախ տեխնիկական առաքելություն ուղարկելու անհրաժեշտությունը:

Էռնեստո Օտտոնեն բարձր է գնահատել Հայաստանի հետ ՅՈւՆԵՍԿՕ-ի համագործակցությունը՝ այդ թվում ընդգծելով Հայաստանի ակտիվ մասնակցությունը եւ աջակցությունը տարածաշրջանում մշակութային ժառանգության ուսումնասիրության, տեխնիկական առաքելությունների իրականացման եւ վերականգնողական աշխատանքներին մասնակցության հարցում:



Նույն օրը կայացել է ԿԳՄՍ նախարարի հանդիպումը ՅՈւՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի կրթության հարցերով տեղակալ **Ստեֆանիա Ջանինիի** հետ: Գլխավոր տնօրենի տեղակալը շնորհակալություն է հայտնել Ներսես Շնորհալուն նվիրված ճանաչողական ցուցահանդեսի եւ գիտաժողովի կազմակերպման համար: Հանդիպման ընթացքում քննարկումներ են ծավալվել Գլոբալ քաղաքացիության եւ մարդու իրավունքների կրթության, ինչպես նաեւ կրթության միջոցով ռասիզմի, խտրականության եւ ատելության խոսքի դեմ պայքարի, *«Կանաչ կրթություն»* նախաձեռնության, թվային կրթության զարգացման հարցերի շուրջ: Ժաննա Անդրեասյանը վերահաստատել է Հայաստանի որոշումը մասնակցել *«Կանաչ կրթություն»* նախաձեռնությանը: Նախարարը կարեւորել է թվային կրթության եւ թվայնացման գործընթացների ընդլայնումը կրթության ոլորտում, միջբուհական համագործակցության շրջանակների ընդլայնումը, կրթության համակարգում ներառականության ընդլայնման հարցերը: Նախարարը կարեւորել է տարածաշրջանում խաղաղ կրթության ապահովումը եւ առաջարկել է ՅՈւՆԵՍԿՕ-ին՝ գործուն մասնակցությամբ աջակցել այս գաղափարին: Անդրադառնալով թվային կրթությանը եւ ուսուցիչների կարողությունների զարգացմանը՝ Ժաննա Անդրեասյանն ընդգծել է Հայաստանի սահմանամերձ շրջանների եւ Լեռնային Ղարաբաղի ուսուցիչներին աջակցելու, վերապատրաստման ծրագրերում ներգրավելու կարեւորությունը: Նախարարն ընդգծել է, որ խախտվում են նաեւ երեխաների եւ ուսանողների կրթություն ստանալու իրավունքները. աշակերտները հաճախակի զրկված են լինում դպրոց հաճախելու, իսկ ուսանողները՝ բուհերում առկա ուսուցում ստանալու հնարավորությունից:

Նույն օրը նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է նաեւ Փարիզի Արեւելյան լեզուների եւ քաղաքակրթությունների պետական ինստիտուտ (INALCO), որտեղ հանդիպել է կառույցի ղեկավար Ժան Ֆրանսու Հյուշեի, հայագիտության բաժնի դասախոսների եւ ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում քննարկել են մի շարք հարցեր, այնուհետեւ նախարարը շրջայց է կատարել եւ ինստիտուտի գրադարանում ծանոթացել հայերեն հնատիպ գրքերին: Նախարարը բուհի գրադարանին է նվիրել Ներսես Շնորհալուն նվիրված մատենագիտական վերջին հրատարակությունը: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել աջակցել գրադարանային ֆոնդի համալրմանը, կազմակերպել հայագիտական կենտրոնների ուսանողների հավաք Հայաստանում, աջակցել կենտրոնի գիտական ուսումնասիրությունների ծրագրերին:

# Ի խնկարկումն Ներսես Շնորհալու հիշատակի

Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, կայացել է Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցին նվիրված եզրափակիչ միջոցառումը՝ *«Հովեր»* երգչախմբի համերգը:

Համերգին ներկա էին ՅՈՒՆԵՍԿՕ-ում հավատարմագրված դեսպաններ, հրավիրված հյուրեր, Ֆրանսիայի գիտական շրջանակների ներկայացուցիչներ, քույր եկեղեցիների հոգեւոր հայրեր:

Ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի տեղակալ **Էդուարդո Ֆիրմին Մատոկոն,** ՀՀ մշտական ներկայացուցչության ղեկավար **Քրիստիան Տեր-Ստեփանյանը:** Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Հոգեշնորհ **Տեր Ասողիկ աբեղա Կարապետյանը** միջոցառման մասնակիցներին փոխանցել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի խոսքը:

Ողջունելով ներկաներին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ Ս. Ներսես Շնորհալին իր անփոխարինելի տեղն է զբաղեցնում հայոց միջնադարի հոգեւոր պատմության մեջ. *«Չափազանց հարուստ, բազմաժանր ու բազմաբովանդակ է Շնորհալու գրական ու աստվածաբանական ժառանգությունը: Շնորհալին հայ քնարերգության մեջ մի շարք ժանրերի հեղինակ է եւ ամենամեծ շարականագիրն է: Ներսես Շնորհալին հեղինակել է հարյուրավոր օրհներգեր, որոնք հարստացրել են հայ եկեղեցու պատարագների եւ ժամերգությունների երգասացությունները, կատարելագործել է հոգեւոր երգերի եղանակները, բարեկարգել եւ ճոխացրել եկեղեցական պաշտոներգությունը»:*

Նախարարի նշմամբ՝ Հայրապետին նվիրված այս արարողությունն ավելին է, քան հանդիսությունը: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ ներկայիս աշխարհաքաղաքական մարտահրավերները, ռազմական ընդհարումների ժամանակ մշակութային համամարդկային արժեքների՝ հազարամյա կոթողների փաստացի ոչնչացումը այլ խորհուրդ են հաղորդում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների 2022-2023 թվականների օրացույցում ընդգրկված Ներսես Շնորհալու հիշատակի միջոցառումներին. *«Համոզված ենք, որ մշակութային, կրոնական ու հոգեւոր արժեքների անձեռնմխելիությունը պետք է բարձրագույն եւ անխախտ սկզբունք լինի բոլոր ազգերի ու պետությունների համար: Աշխարհաքաղաքական ալեկոծումները, քաղաքական հակասությունները եւ ռազմական ընդհարումները չեն կարող սպառնալիք լինել այնպիսի արժեքների համար, որոնց ստեղծումն ու պահպանումը հազարավոր սերունդների հոգեւոր սխրագործության ու հումանիստական արժեքների բարձր գիտակցության դրսեւորում են: Սուրբ Ներսես Շնորհալուն նվիրված այս միջոցառումն այնպիսի բարձր միջազգային հարթակում, ինչպիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանն է, մեզ համար ունի մշակութային ժառանգության պահպանման համընդհանուր պատասխանատվության ուղերձի նշանակություն,- նշել է ԿԳՄՍ նախարարը եւ շարունակել,- ի՞նչ կմնար Ներսես Շնորհալու ժառանգությունից, եթե այդ ժառանգության հետ վարվեին այնպես, ինչպես այսօր վարվում են Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության հետ՝ ոչինչ...»:*




Ավարտելով խոսքը՝ նախարարը շնորհակալություն է հայտնել բոլոր կազմակերպիչներին եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարությանը նման հնարավորություն ստեղծելու եւ միջոցառման կայացմանն աջակցելու համար:

Միջոցառման բացման բանախոսներն արժեւորել եւ կարեւորել են Ներսես Շնորհալու ստեղծագործական ժառանգությունը, նրա դերակատարությունը համաքրիստոնեական արժեքների տարածման գործում:

Ողջույնի խոսքերին հետեւել է համերգային ծրագիրը, որը կազմված էր հայ հոգեւոր միջնադարյան շարականների, Կոմիտասի եւ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններից: Երգչախումբը ներկայացրել է նաեւ եվրոպական հոգեւոր երաժշտություն: Համերգն ուղեկցվել է թեմատիկ տեսաշարով:

Մշակույթ

## «Տիրինկատարի» վիշապաքարերը

ՀՀ կառավարության որոշմամբ` վերաբաշխում եւ լրացում է կատարվել 2023 թվականի պետական բյուջեի մասին օրենքում` 4 մլն 494 հազար դրամ ուղղելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում *«Տիրինկատարի»* վիշապաքարերի ընդգրկման հայտի պատրաստման աշխատանքներին:

Վերաբաշխումը կնպաստի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում Տիրինկատար լեռան տարածքում գտնվող վիշապաքարերի` որպես յուրահատուկ եւ համամարդկային ժառանգության ընդգրկման հայտի պատրաստմանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության հիմնական ցանկում Հայաստանի Հանրապետությունից գրանցված է 3 հուշարձանախումբ` Սանահինի եւ Հաղպատի վանական համալիրները, Գեղարդավանքը եւ Ազատ գետի վերին հովիտը, Էջմիածնի Մայր տաճարը, եկեղեցիներն ու Զվարթնոցի տաճարը: Այս բոլոր գրանցումները կատարվել են 1998-2000 թթ, որից հետո Հայաստանի Հանրապետության կողմից որեւէ նոր հուշարձան չի գրանցվել:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում (Tentative list) Հայաստանի Հանրապետությունից գրանցված է 4 հուշարձանախումբ` Դվին հնավայրը, Նորավանքն ու Ամաղուի ձորահովիտը, Երերույքի տաճարը, Տաթեւ վանական համալիրն ու Տաթեւի անապատը: Այս բոլոր գրանցումները կատարվել են 1995 թգ:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընթացակարգի` մինչեւ Համաշխարհային ժառանգության հիմնական ցանկում ընդգրկվելը` անհրաժեշտ է, որ օբյեկտն ընդգրկված լինի նախնական ցանկում:

Սկսած 2024 թվականից` ԿԳՄՍ նախարարությունն առաջիկա Միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսել է առանձին միջոցառում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկերում ավելացվող հուշարձանների հայտերի պատրաստման համար, որի նպատակն է լրացնել ավելի քան 20 տարվա բացը` նախատեսելով միջոցներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում նոր հուշարձանների ընդգրկման համար: Միջոցները ծախսվելու են հայտերի պատրաստման, հուշարձանների կառավարման պլանների մշակման, թարգմանությունների, գիտական հիմքով բովանդակային հայտի լրացման, փորձագիտական խորհրդատվության եւ այլ ուղղություններով:

Հաշվի առնելով 1972 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության պահպանության կոնվենցիայի գլխավոր ասամբլեայի տարեկան որոշումներն ու հայտերի գրանցման ընթացակարգային փոփոխությունները` աշխատանքը կներառի նաեւ կազմված հայտերի շարունակական լրամշակում վերջնանպատակին` հայտի գրանցմանը հասնելու համար:

***ՀԵղինԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

## Ծրագիրն ազգայնացվել է

***սկիզբը` էջ 3***

ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը, մատնանշելով ծրագրի կարեւորությունը, նշել է, որ այս տարիներին ծրագրի աջակցությունը եղել է ոչ միայն ֆինանսական, այլ նաեւ տեխնիկական, մեթոդական եւ կադրերի պատրաստման հարցում. *«Ծրագիրն աշխատում է շատ լավ մեխանիզմով եւ ունի մեծ ներուժ, ինչն էլ առիթ դարձավ, որ Ռուսաստանի Դաշնությունն աջակցի այս կարեւոր նախագծի իրականացմանը: Վստահ եմ, որ ռուսական աջակցությունը ծրագրի իրականացման եւ կատարելագործման հարցում շարունակվելու է մեր երկու երկրների ամուր համագործակցությունը շնորհիվ»:*

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի մշտական համակարգողի պաշտոնակատար Նիլս Սքոթն ասել է, որ 2016 թվականից սկսած` *«Դպրոցական սնունդ»* ծրագրի իրականացումը բոլոր 10 մարզերում աստիճանաբար փոխանցվել է ՀՀ կառավարությանը, սակայն ՊՀԾ-ն շարունակում է ծրագրին տեխնիկական աջակցություն եւ ռեսուրսներ տրամադրել` ծրագրում ներգրավված դերակատարների հմտություններն ու կարողությունները բարելավելու նպատակով:

Նշենք նաեւ, որ *«Դպրոցական սնունդ»* ծրագիրը մինչ այս իրականացվել է ՀՀ կառավարության, *«Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն»* հիմնարկի (SFCWA), Ռուսաստանի Դաշնության սննդի ճյուղային ինստիտուտի (SIFI), ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) եւ նրա տեխնիկական գործընկերների հետ ռազմավարական համագործակցության արդյունքում:

Արցախ

## «Արարող երիտասարդներ»

Չնայած կես տարուց ավելի ձգվող եւ հետզհետե առավել սեղմվող շրջափակմանը ու դրան հետեող բազմաթիվ խնդիրներին` *«Արարիչ»* բարեգործական հիմնադրամն Արցախում գործունեության իր շրջանակն ընդլայնում է նոր ծրագրերով:



Երիտասարդների հայրենաճանաչողությանը, հայրենասիրական դաստիարակությանն ուղղված իր ներդրումները հիմնադրամն իրականացնում է կրթական, մարզական, մշակութային տարաբնույթ միջոցառումներով:

Երեխաների պաշտպանության օրվան նվիրված հանդիսության յուրօրինակ շարունակությունն է երիտասարդական ճամբարի կազմակերպումը:

Հուլիսի մեկին *«Արարող երիտասարդներ»* նշանաբանն ունեցող ճամբարը հյուրընկալել է վաթսուն հոգանոց իր առաջին հերթափոխին:

Ճամբարը մեկ ամիս` չորս հերթափոխով,240 երիտասարդի հնարավորություն կտա իր ակտիվ հանգիստն անցկացնել Արցախի գեղատեսիլ վայրերից մեկում` Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում:

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում ճամբարականներին բարի երթ է մաղթել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ **Կարեն Սարգսյանը:**

Կազմակերպիչների խոսքով երիտասարդների հանգիստը լինելու է հագեցած` ճանաչողական, մշակութային, մարզական օրակարգով: Ճամբարը կհյուրընկալի նաեւ քաղաքական, հասարակական, մշակութային ճանաչված գործիչների:

Հիշեցնենք, որ Ծմակահողը ԽՍՀՄ անվանի ֆիզիկոս եւ գյուտարար, տեխնիկական գիտությունների դոկտոր, ԱԱ ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանի ծննդավայրն է: Նա ԽՍՀՄ ռազմական եւ տիեզերական հրթիռաշինության գլխավոր կոնստրուկտորներից մեկն էր, ում անունները հայտնի են դառնում միայն մահից հետո:

Չնայած Իոսիֆյանն ապրում էր Մոսկվայում, բայց զավակի ամենաջերմ սիրով եւ գործուն աջակցությամբ կապված էր Հայաստանի եւ Արցախի հետ:

Երդաստանի ժառանգների շնորհիվ վերանորոգված նրա հայրական տունը պահպանելով իր նախկին տեսքը, այսօր վերածվել է թանգարանի: Անշուշտ ճամբարականներին անվանի մեր հայրենակցի կյանքն ու գործունեությունը կներկայանա որպես հայրենաճանաչողության եւ ինքնաճանաչողության եւս մեկ սրբազան ուխտ` Արցախից` մինչ տիեզերք հետագծով...

## Ամփոփագիր` համերգաշարով

Ուսումնական տարին եռօրյա համերգաշարով է ամփոփել Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը: Երեխաներին անչափ սիրելի այս կենտրոնը ստեղծվել 1993-ին` արցախյան առաջին պատերազմի ամենադաժան ժամանակահատվածում: Հատկանշական է, որ հենց առաջին տարում իսկ այստեղ հաճախող երեխաների թիվն աչք շոյող էր: Այսօր գործող երեք` *«Տեխնիկական ստեղծագործություն եւ կիրառական արվեստ», «Կենցաղային էսթետիկա»* եւ *«Երաժշտագեղարվեստական ստեղծագործություն»* բաժիններն ունեն 105 խմբակ: Ուսուցումն իրականացվում է անվճար հիմունքներով, 5-18 տարեկան 1500 սաների հետ աշխատում են հմուտ եւ նվիրված 90 մասնագետներ: Խմբակները բազմազան են` մաքրամե, գոբելեն, կարուճե, հագուստի մոդելավորում, ժանյակ, կոլաժ, ասեղնագործություն, ուլունքագործություն, փայտափորագրություն, ռադիոտեխնիկա, էլեկտրատեխնիկա, թատերական, երգ, դհոլ, պարարվեստ եւ այլն: Տարեցտարի սաների թիվն ավելանում է` որպես վառ ապացույց այստեղ տարվող բազմաբնույթ, գունեղ եւ հետեողական աշխատանքի: *«Պարապմունքների որակի ապահովման, խմբակավարների ինքնակրթության եւ մասնագիտական բարձր ցուցանիշներ ունենալու, սաների վերաբերմունքը ուսուցման նկատմամբ ավելի պատասխանատու դարձնելու նպատակով,տարեկան երկու անգամ` հունվար եւ հունիս ամիսներին, երեխաները հանձնում են ստուգարքներ, այնուհետեւ` քննություններ: Արդյունքում` սաները ստանում են համապատասխան վկայական տվյալ խմբակի լրիվ դասընթացն ավարտելու մասին»,-* մեզ հետ ունեցած զրույցում նշել է կենտրոնի տնօրեն **Վիլեն Միքայելյանը:** Շրջանավարտներից շատերը հաջողությամբ իրենց ուսումը շարունակելով ներկայումս աշխատում են պարի պետական համույթում, պետական դրամատիկական թատրոնում, Արցախում գործող մշակութային այլ կոլեկտիվներում: Տնօրեն Վիլեն Միքայելյանի խոսքով կենտրոնն իր փորձառու մասնագետներով ձգտում է թեթեւացնել շրջափակված Արցախում մեծերի հետ դժվարություններ հաղթահարող սաների առօրյան: Մինչ Արցախի շրջափակումը կենտրոնի սաները մշտապես մասնակցել են ՀՀ-ում, ինչպես նաեւ արտերկրում կազմակերպվող տարբեր միջոցառումներին, մրցույթ-փառատոններին` արժանանալով հաղթանակներ ու մրցանակային առաջնակարգ տեղեր: Ուշագրավ է, որ լինելով եւս մեկ դժվարընթաց ուսումնական տարվա ամփոփագիր` եռօրյա համերգաշարը նաեւ հեռահար նպատակ ուներ: Այս հոկտեմբերին կենտրոնը կդառնա երեսուն տարեկան եւ համերգաշարն արդեն նախանշել է տոնական հանդիսությանը ներկայացվելիք համարները:




***Նվարդ ԱԼԵՒՔՍԱՆՅԱՆ***
***ք. Ստեփանակերտ, մեր սեփական թղթակից***

# Սերգո ԵՐԻՑՅԱՆ



ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ցավով հայտնում է, որ 66 տարեկան հասակում կյանքից հեռացել է ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար, Լեզվի պետական կոմիտեի նախկին նախագահ, Ազգային ժողովի նախկին պատգամավոր, հայտնի հեռուստալրագրող եւ դասախոս, *«Լոռվա ձոր»* հայրենակցական միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը:

Սերգո Սարգսի Երիցյանը ծնվել է 1957 թվականի հունիսի 11-ին, ՀՀ Լոռու մարզի Թումանյանի շրջանի Ճոճկան գյուղում:

1975-1978 թթ. սովորել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ապա որպես գերազանց առաջադիմությամբ ուսանող՝ տեղափոխվել եւ կրթությունը շարունակել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում:

1987 թվականին պաշտպանել է *«Հայաստանի հեռուստատեսությունը ԶԼՄ-ների համակարգում»* թեմայով թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2004 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ *«Հեռուստատեսություն. գործառույթները, զարգացման միտումները եւ հեռանկարները»* թեմայով:

1981-1999 թվականներին աշխատել է ՀՀ հեռուստառադիոյի համակարգում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ խմբագրից մինչեւ հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի տնօրեն:

1995-2003 թվականներին եղել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, 2003-2006 թվականներին՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարար, 2006-2008 թվականներին՝ ՀՀ նախագահի խորհրդական, 2010 -2018 թվականներին ղեկավարել է ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչությունը: Ստացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան: Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է:

Սերգո Երիցյանը դասավանդել է լրագրություն Երեւանի պետական, Հայ-ռուսական, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարաններում, մասնագիտական 45 գրքերի հեղինակ եւ համահեղինակ է, հեռուստատեսության եւ մամուլի տեսությանը նվիրված մենագրությունների հեղինակ է, գրքեր է գրել նաեւ հայ բարերարների գործունեությանը, բարեկամ երկրների արվեստին ու գրականությանը նվիրված:

Հայտնի է՝ որպես հեռուստալրագրող, վարել է *«Կարծիք»* հեղինակային հաղորդաշարը:

Սերգո Երիցյանն ամուսնացած է, ունի դուստր եւ որդի:

ԿԳՄՍ նախարարությունն իր վշտակցությունն է հայտնում Սերգո Երիցյանի ընտանիքին, հարազատներին ու գործընկերներին:

Հրաժեշտի խոսք

# Նոջի՛ր խաղաղությամբ, իիշատակդ՝ վա՛ռ...

Գնաս բարով, մեր լավ ընկեր... վաստակած, բայց եւ պարզ ու առինքնող... Չեմ ուզում հեղել բառեր, որ նման առիթներով պատշաճ է արտահայտել... դրանով Քեզ չեմ բնութագրի ու չեմ արտահայի երախտագիտությունս... Այո՛, Դու ունեիր վաստակ, անուրանալի եւ դեռ գնահատության կարոտ, բայց եւ պարզ էիր ու առինքնող... մարդ, հայ, լրագրող, գործիչ... համեստ, բայց աշխատասեր, քչով բավարարվող, բայց նպատակասլաց... Չէ՛, էլի փորձում եմ բնութագրել... Բայց, ինչ էլ որ ասեմ, չի լինի ամբողջական: Քո սիրելի թերթի՝ *«Կրթության»* ընթերցողներին գուցե միայն պատմեմ, թե ինչպես վերաիիմնեցիր թերթը...

Քեզ ճանաչում էի դեռ ուսանողական տարիներից: Հետո արդեն ծանոթ էի Քո լրագրողական գործունեությանը: Դու նույնպես չդիմացար գայթակղությանը եւ մտար քաղաքականություն... բայց այստեղ էլ միշտ մնացիր ազնիվ մասնագետ: Դարձար պատգամավոր, նախարար, Նախագահի խորհրդական, սակայն, թեեւ չդավաճանելով գաղափարակից ընկերներիդ, այդպես էլ չդարձար կուսակցական: Միշտ մնացիր պարզ հայ, պարզ հայաստանցի, բայց եւ Քեզ վստահված գործի նվիրյալ...

18 տարի է անցել... Մի օր հրավիրեցիր Նախարարություն (այդ ժամանակ *«Հայաստանի Հանրապետություն»* օրաթերթի գլխավոր խմբագրի տեղակալն էի) ու ասացիր. *«Ուզում եմ՝ վերականգնես «Կրթությունը»: Այն արդեն մի քանի ամիս է՝ լույս չի տեսնում... Ուզում եմ, որ լինի որակապես նոր թերթ: Գիտես, որ մասնագիտությամբ լրագրող եմ, եւ Նախարարության թերթն էլ հարկ է, որ ունենա պատշաճ մակարդակ...»: «Կգամ, միայն եթե խոստանաս լիակատար ազատություն»: «Խոստանում եմ, միայն որակ եմ պահանջելու...»:* Համաձայնեցի...

Միասին աշխատեցինք ընդամենը 14 ամիս... Այդ ընթացքում թերթը կայացավ, հետո զարգացավ, տարածվեց, դարձավ սպասված ու սիրելի... Ոչ միայն իմ ու Քո կարծիքով: Խոստովանեմ՝ ավելի շատ հենց Քո շնորհիվ... Զանգում էիր, ասում՝ այսինչ էջի այսինչ տողում ստորակետի փոխարեն պիտի բութ լիներ... Ուրախանում էի, ոգեւորվում, որ կարդում էիր ծայրից ծայր... Որեւէ երկիր գործուղման մեկնելուցդ առաջ պայմանավորվում էինք, վարորդին ուղարկում էիր նախ իմ հետեւից, ապա միասին գնում էինք օդանավակայան, եւ մինչ ինքնաթիռն օդ կբարձրանար, արդեն գիտեի, թե ինչ միջոցառման պիտի մասնակցեիր, ինչ օրակարգով բանակցեիր կամ ինչ փաստաթուղթ քննարկեիր ու ստորագրեիր... Ու հաղորդագրությունն արագ հայտնվում էր թերթում...

Հուշերը բազմաթիվ են: Դու եղար թերթի վերականգնող հիմնադիրը եւ դարձար բարեբեր առիթը խմբագրակազմի 18 տարիների ստեղծագործական ուղու... ինչի համար հավերժ երախտապարտ եմ Քեզ: Տարբեր առիթներով տասնյակ հարցազրույցներ եմ վարել Քեզ հետ ու այսօր դրանցից մեկը, որ արվեց Քո ծննդյան 50 ամյակի առթիվ, կրկին ուզում եմ հանձնել Քո սիրելի թերթի ընթերցողներին՝ ի լրումն հրաժեշտի այս խոսքի:

***Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ***
***«Կրթություն» շաբաթաթերթի***
***տնօրեն եւ գլխավոր խմբագիր***

# Վաստակած, բայց պարզ եւ առինքնող

ՀՀ նախագահի խորհրդական **Սերգո Երիցյանի** ծննդյան 50-ամյակի առիթով **«Կրթություն»** շաբաթաթերթը իր վաղեմի բարեկամին հրավիրեց մտերմիկ զրույցի:

- Պարո՛ն Երիցյան, բնականաբար, Ձեր հոբելյանի օրը Դուք պետք է որ մտաբերեք Ձեր անցած ճանապարհը, ուզեք թե չուզեք, ակամա պետք է հայտնվեք Ձեր մանկության դրվագներում...

*- «Մանկության օրեր, երազի նման, անցաք, գնացիք, էլ չեք դառնալու...»,- Նալբանդյանն էր ասում: Այո՛, մտաբերվող հուշերիս մեջ ամենից հաճախ երեւում է Լոռվա մաքուր բնաշխարհը... Ժապավենի նման հատկապես իմ ծննդավայր Ճոճկան գյուղի պատկերները գալիս - ներկայանում են ինչպես կտավների շարք... Ահա մեր հին դպրոցը, ուր ոտք դրի իմ առաջին Սեպտեմբերի 1-ին, նորակառառույց դպրոցը, որտեղ շարունակեցի սովորել եւ ավարտեցի, առաջին ուսուցչուհիս՝ Մարուսյա Մելիքսեթյանը... Երեւի թե շատ կարեւոր են մանկության դասերը, մանկության այն ակնթարթները, որ դաս են դառնում հետագա ողջ կյանքի համար: Ի դեպ, ասեմ, ծնողներս էին պատմում, ես էլ, իհարկե, հիշում եմ, որ դժվարությամբ եմ դպրոց գնացել: Բայց նաեւ հիշում եմ, որ ընդամենը մի քանի օր էր անհրաժեշտ, որպեսզի ես շատ սիրեի դպրոցը: Սրանք դրվագներ են, որ միշտ ինձ հետ են եւ հառնում են ցայտուն՝ ամեն ուրախ ու տխուր պահի... Ահա, հիմա աչքիս առաջ հայտնվեցին հեծանիվս, ֆուտբոլի գնդակը, որ ինձ համար թալիսմաններ էին... Եվ ինքնաշեն գրասեղանս, որ մեր հարեւաններից մեկն էր պատրաստել, որ ինձ համար դարձավ գրասիրության աղբյուր: Վրան ապակի էր դրված, ապակու տակ՝ ժամանակի երիտասարդության կուռքերի լուսանկարները... Գիրք կարդալ շատ էի սիրում: Դպրոցը ավարտեցի գերազանցությամբ, հետո՝ համալսարանը...*

- Ընտանիքում քանի՞ երեխա էիք:

*- Ընտանիքի միակ երեխան եմ եղել: Թեեւ ծնողներս ինձ համար ոչինչ չէին խնայում, չդարձա այնպիսին, ինչպիսին սովորաբար լինում է միակ երեխաների պարագայում. այսինքն՝ երեսառածության, կամակորության հովեր չունեցա... Չգիտեմ՝ ինչպես պատահեց, հինգերորդ թե վեցերորդ դասարանում էի, գրեցի, թե ինչպես շրջանային ժողգործիքների անսամբլը եկավ մեր գյուղ եւ հանդես եկավ համերգով: Գրեցի, ծրարեցի, ուղարկեցի: Տպագրվեց շրջանային թերթում: Հետո էլի ինչ-որ բաներ գրեցի գյուղի մասին եւ ուղարկեցի «Ավանգարդ»-ին. դրանք էլ տպագրվեցին: Արդեն*



*վեցերորդ դասարանում որոշումս պատրաստ էր. լրագրող պիտի դառնայի: Ի դեպ, ասեմ, որ ես այն երջանիկ մարդկանցից եմ, որոնց երազանքներն ու նպատակները, թեեւ դժվարություններով, իրականություն են դառնում:*

- Ձեր ընտանիքում լրագրողներ կայի՞ն:

*- Ո՛չ: Հայրս ջրաշինարար էր, մայրս՝ հաշվապահ: Իրենք, անկեղծ ասած, ոչ մի անգամ որեւէ կերպ չեն փորձել ուղղորդել իմ նախասիրությունները: Կար միայն հորդոր՝ լավ սովորելու, ուսման, գրի, գրականության հանդեպ պաշտամունք ունենալու: Պայմաններ էին ստեղծում, որպեսզի ես սովորեմ: Եթե պետք էր այս կամ այն գիրքը, ապա այն շատ արագ գտնվում էր: Այն ժամանակ էլ գյուղերը հարուստ ու բարգավաճ չէին, բայց ցանկություն կար սովորելու, ավագ սերունդը ոչինչ չէր խնայում, իր վերջին հնարավորությունները կարող էր ծախսել, միայն թե զավակը կրթություն ստանա:*

- Ե՞րբ առաջին անգամ Երեւան եկաք:

*- Ես առաջին անգամ Երեւան եմ եկել, երբ շրջանավարտ էի: Երեւանը չէի տեսել: Թիֆլիսում եղել էի: Մեր «մայրաքաղաքը» Թիֆլիսն էր: Իմ մանկության ամենամեծ քաղաքը Վանաձորն էր, որն ավելի մոտիկ էր, բայց Թիֆլիսը մեզ համար հեքիաթային քաղաք էր: Թիֆլիսի գազով ջուրը, բուբլիկը, էլեկտրագնացքը... Թիֆլիսում առաջին անգամ մետրո տեսա, տեսա մեր մեծերի պանթեոնը՝ Խոջեվանքը: Այդ ժամանակ ըմբռնեցի, որ Թիֆլիսը մեր մշակութային կենտրոնն է, այլեւս բուբլիկի, գազով ջրի կամ մետրոյի քաղաքը չի, այլ Սայաթ-Նովայի, մեր մյուս մեծերի քաղաքը: Մենք հաճախ էինք էքսկուրսիաների մասնակցում. Հաղպատ, Օձուն, պարզապես՝ անտառ: Մենք կապված էինք բնության հետ: Ստանում էինք նաեւ բնաշխարհի դասերը: Մենք հավատ ունեինք. որ պիտի սովորենք ու լավ մարդ դառնանք: Եւ դա սերմանվում էր ամեն մի երեխայի մեջ: Այսօր մեր դպրոցներում եւ մյուս կրթօջախներում այդ հավատի պակասը կա, կա նպատակի ձեւակերպման եւ դրան ձգտելու պակասը: Երեխան, երբ տեսնում է, որ ինքը տքնում է, սովորում է, իսկ կողքի հարեւանը, որ նույնիսկ տառերը լրիվ չգիտի, քաղաքական գործիչ է դառնում կամ մեծահարուստ մեկը, ապա այդ երեխայի մոտ խախտվում է արժեքային համակարգը: Մենք դաստիարակվեցինք արժեքային որոշակի համակարգով: Հիմա էլ Հայաստան կառուցելու համար հաստատուն արժեքային համակարգի կարիքն ունենք: Իհարկե, ամեն բան տեղը կընկնի ժամանակի հետ, ուսումն իր տեղը կունենա, արհեստն՝ իր, ընտանեկան ավանդույթները, ազգային ծեսերը, տոները, ամեն բան վերստին կարժեւորվեն...*

***շարունակությունը՝ էջ 8***

# Վաստակած, բայց պարզ եւ առինքնող

*սկիզբը՝ էջ 7*

- Նույնիսկ հոբելյանի առիթով զրույցի ընթացքում, մանկական հուշերի դրվագների ծիրում դարձյալ չեք մոռանում Ձեր մտահոգությունները եւ խոսքն ուղղում եք դեպի բնագավառի խնդիրները:

*- Վերադառնամ նախկին խոսքիս... Ավանդույթների մասին... Մեր գյուղերում խորհրդային տարիներին տոները յուրահատուկ բովանդակությամբ էին լցված: Իհարկե, դրանք ժամանակի գաղափարախոսական շունչն էին կրում, բայց դրան զուգահեռ ազգային ամենաբարի եւ ընդօրինակելի առանձնահատկություններ էին դրսեւորում: Ավագ սերնդի յուրաքանչյուր ներկայացուցիչ կիհիշի եւ կհաստատի իմ ասածը: Մայիսի 1-ը, Մայիսի 9-ը, բոլոր մյուս տոները հրաշալի առիթ էին դառնում ե՛ւ գյուղում մնացածների, ե՛ւ գյուղից հեռացածների համար՝ հավաքվելու, միասին ուրախանալու, իրոք տոնական պահեր ապրելու: Իհարկե, յուրաքանչյուր ազգ ունի իր առանձնահատուկ տոները, ծեսերը: Դրանք ինքնանպատակ չեն, այլ, թերեւս ամենից կարեւոր, դաստիարակչական եւ հոգեւոր խորհուրդներն ունեն: Այսօր մենք աստիճանաբար վերականգնում ենք մեր մոռացված ծեսերը, փորձում հավուր պատշաճի դրանք տոնել, դարձնել հասարակության սեփականությունը, բայց նաեւ պետք է ձգտենք մեր յուրաքանչյուր հայրենակցի հոգում վերականգնել տոնականությունը, լիարժեք ու լիաթոք ուրախանալու ցանկությունը, հավատը կյանքի, վաղվա օրվա, հայրենիքի, ընտանիքի, մարդու հանդեպ: Հիմա ոչ ոք չի կարող հավատալ, որ գյուղում ծնված երեխան կարող է հասնել մեծ հաջողությունների: Դժբախտաբար, օրինակ Լոռու մարզում, կան գյուղեր, որոնց դպրոցների շրջանավարտներից եւ ոչ մեկը վերջին տարիներին չի ընդունվել բուհ... Այսինքն՝ մենք խնդիր ունենք ոչ այնքան կրթական համակարգը իրականում բարեփոխելու, որքան վերականգնելու հավատը ուսման նկատմամբ, անհատի ձգտումը ուսման միջոցով հաջողության հասնելու: Ովքե՞ր էին մեր պարծանքը ֆիզիկայի, մաթեմատիկայի, քիմիայի ոլորտներում. գյուղերից եկած, հավատք ունեցող, ուշիմ, աշխատասեր երիտասարդները, որոնք անմնացորդ նվիրվում էին գիտությանը եւ նպաստում մեր տեսակի գոյատեւմանը, զարգացմանը... Այսօր էլ շատ տաղանդավոր երեխաներ ունենք, որոնք սակայն որոշ հուսալքության պատճառով չեն էլ փորձում անգամ մտածել բարձրագույն կրթության մասին... Գուցե նախատեսված ավագ դպրոցը կարողանա իր շուրջը հավաքել շնորհալի երեխաներին, վեր հանել տաղանդներին...*

- Դուք տեղափոխվեցիք քաղաք:

*- Ես ընդունվեցի Երեւանի պետական համալսարան: Արագ կարողացա մայրաքաղաքային կյանքին հարմարվել: Ապրում էի հանրակացարանում: Շուտով հասկացա, որ իսկապես ճիշտ մասնագիտություն եմ ընտրել եւ կարող եմ իմ մասնագիտական կարողությունները օգտագործել: Կարճ ժամանակ հետո ես տեղափոխվեցի Մոսկվայի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետ: Այդ տարիներին հայկական ռադիոն ուներ «Գյուղական հորիզոններ» հաղորդաշարը: Ես ոչ միայն հայրենի գյուղի, այլեւ տարբեր բնակավայրերի մասին ռեպորտաժներ էի պատրաստում, հոդվածներ գրում «Ավանգարդ», «Կանչ», նաեւ «Սովետական Հայաստան» թերթերի համար:*

- Որքա՞ն մնացիք Մոսկվայում:

*- Երկու փուլով՝ երեք գումարած երեք. երեք տարի որպես ուսանող, երեք տարի որպես ասպիրանտ:*

- Իսկ ընտանիք ե՞րբ կազմեցիք:

*- Հասցրեցի ամուսնանալ 25 տարեկանում: Ծնվեց առաջին զավակս՝ տղաս, 10 տարի անց երկրորդը՝ աղջիկս: Մոսկվայից վերադառնալուց հետո ստիպված էինք հաղթահարել բնակարանային խնդիրներ, դժվարություններ: Այն ժամանակվա երիտասարդության համար էլ ոտքի կանգնելը հեշտ չէր, ինչքան էլ որ ծնողները օգնեին: Սկսեցինք աշխատել, կամաց-կամաց տուն-տեղ դրեցինք:*

- Ձեր կինն է՞լ է լրագրող:

*- Իմ կինը բանասեր է, եւ այսօր լրագրության ասպարեզում, հասարակական կարծիքի ուսումնասիրման բնագավառում, կարծեմ, որոշակի հաջողությունների է հասել: Խոստովանեմ, որ ես իրեն «վարակեցի» լրագրության հանդեպ սիրով:*

- Դուք նաեւ զբաղվել եք գիտահետազոտական աշխատանքով:

*- 1987թ. պաշտպանելով թեկնածուական, 2004թ.՝ դոկտորական ատենախոսություններ...*

- Եւ միակ դոկտորն եք մեզանում՝ հեռուստալրագրության ոլորտում...

*- Եւ դա ինձ պարտավորեցնում է ավելի շատ ժամանակ տրամադրել դասախոսական աշխատանքին, նպաստել, որ այդ ոլորտում նորանոր երիտասարդներ ընդգրկվեն, մասնագիտանան, պաշտպանեն ատենախոսություններ: Անգամ նախարար աշխատած ժամանակահատվածում փորձել եմ չբացակայել դասախոսական աշխատանքից:*

- Իսկ մինչ այդ լրջորեն զբաղվել եք քաղաքականությամբ:

*- 1995թ. ընկերներիս հետ մի հանդիպման ժամանակ որոշեցի փորձել պատգամավոր դառնալ: 22 թեկնածու կար այդ ընտրատարածքում: Անկեղծ ասած, երբեւէ մինչ այդ ցանկություն չէի ունեցել դառնալ պատգամավոր կամ ընդհանրապես զբաղվել քաղաքականությամբ, որովհետեւ ես շատ եմ սիրում իմ մասնագիտությունը: Բայց այնպես ստացվեց, որ այդ ժամանակաշրջանում հենց հասարակական ինչողության շատ հարցադրումներ հրապարակ բերելու եւ, որ ավելի կարեւոր է, խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ էր ձեռք բերել որոշակի լծակներ: Դրանք այս դեպքում կարող էին խտանալ պատգամավորական լիազորությունների մեջ: Ընտրություններում հաղթեցի, եւ ինչպես գիտեք, նման հաջողություն ինձ ճակատագիրը ընձեռեց հետագայում եւս երկու անգամ:*

- Ընտրություններում հաղթելու համար Ձեզ նպաստեց լրագրողի Ձեր հեղինակությունը:

*- Այլ բան չէր կարող լինել: Լրագրողի հեղինակությունը միակ վճռորոշն էր: Ո՛չ նախընտրական շտաբ ունեի, ո՛չ քաղաքական կուսակցություն՝ իբրեւ հենարան, բայց ունեի հավատ, հեղինակություն, ընկերներ:*

- Եւ քաղաքական գործչի Ձեր հեղինակությունը նպաստեց, որ ստանձնեք Կրթության եւ գիտության նախարարի պարտականությունները:

*- Այո, նախարար դարձա քաղաքական գործունեության հետեւանքով: Համոզված եմ, որ իմ գործունեությամբ,որտեղ էլ որ եղել եմ, փնտրել եմ ճշմարտությունը, հայրենիքի շահը, հասարակության շահը, մարդու շահը: Մենք 15 տարեկան երկիր ունենք, թեեւ հազարամյակների, այդ թվում նաեւ դարավոր պետականությամբ, պատմություն ունենալով, եւ շատ դեպքերում, որքան էլ ցանկանանք, ամեն ինչ միանգամից չենք կարող կարգավորել: Թվում է, թե պարզից էլ պարզ է. կրթությունը այսպիսին պետք է լինի, առողջապահությունը՝ այս ձեւով, գյուղատնտեսությունը՝ այս կերպ: Տեսականորեն որեւէ տարակույս չկա: Բայց գործնականում դժվար է իրականությունը կարճ ժամանակահատվածում համապատասխանեցնել ցանկություններին ու ծրագրերին: Այն, ինչ ես երեք տարի շարունակ փորձել եմ անել՝ լինելով կրթության նախարար, նպատակամղված է եղել բարեփոխումներին: Այդ երեք տարում ստեղծված ծրագրերը անշրջելի են նաեւ ապագայի համար: Կարծում եմ, որ ցանկացած պաշտոնյա պիտի գործի իր բնագավառում հենց այդ անշրջելիությունը պահպանելու մղումով: Անկեղծ ասած, ինձ ուրախացնում է, երբ օտարները, կրկին անգամ գալով Հայաստան, նկատում են դրական ակնհայտ փոփոխություններ: Հենց այսօր մեր հույն գործընկերների հետ հանդիպում ունեի, որոնք նշեցին մեզանում տեղի ունեցած դրական տեղաշարժերը: Մենք, անշուշտ, կուզեինք, որ այդ փոփոխությունները ավելի արագ նպաստեին մեզանում հասարակության կենսամակարդակի աճին, մասնավորապես կրթության համակարգում վերածվեին կտրուկ որակական առաջընթացի: Այս ճանապարհին ամեն մեկս մեր մասնագիտական կարողությունները պիտի կարողանանք ներդնել, հաղթահարել սիրողականությունը: Արհեստավարժությունը եւ քաղաքական հասունությունը կնպաստեն մեր երկրի վերականգնմանը եւ հզորացմանը:*

- Դուք Ձեզ համարո՞ւմ եք լավ զավակ:

*- Կարծում եմ՝ այո: Հիմա հայրս չկա... Շարունակվում է մորս անհանգստությունն ու տառապանքը իր զավակի համար: Նաեւ հպարտությունը: Հեշտ չէ ուսանող պահելը Երեւանում, Մոսկվայում... «Չէ» բառը չեմ լսել իմ ծնողներից: Իրենց բերանից կտրել՝ ինձ համար ոչինչ չեն խնայել... Այսօր էլ մայրս երբեմն-երբեմն, երբ հեռուստացույցով ինձ տեսնում է, զանգում է ու ասում՝ երեկ քեզ տեսա, տրամադրությունդ մի քիչ լավ չէր, ի՞նչ է եղել... Չէ՛, մայրի՛կ, ամեն բան լավ է: Ո՛չ, որդի՛ս, մի՛ խաբիր, տրամադրությունդ ընկած էր... Մորդ չես խաբի: Ծնողներիդ սկսում ես հասկանալ, երբ ինքդ ես ծնող դառնում: Իսկ ես արդեն ունեմ հասուն որդի, որը շուտով ասպիրանտուրան կավարտի, կպաշտպանի թեկնածուական ատենախոսություն:*

- Պատրաստվում է լրագրո՞ղ դառնալ:

*- Մասնագիտությամբ իրավաբան է: Վստահ եմ, որ խելացի է, աշխատասեր, գիտեմ, թե որքան է չարչարվել, աշխատել ու գրել... Աղջիկս յոթերորդ դասարանն է ավարտել: Լավ է սովորում: Ուսուցիչներն ասում են, որ առաջինն է դասարանում: Սիրում է կարդալ: Ուզում է տիեզերագնաց դառնալ: Մանկական երազանքներ են: Չեմ միջամտում: Կարեւորը, որ լավ մարդ դառնան: Բարի լինեն: Բարությունը կփրկի աշխարհը: Հաճախ ենք ասում, որ մենք ավելի լավն ենք եղել, քան մեր երեխաները: Ես համամիտ չեմ: Նրանք ավելի լավն են: Նրանք այս երկրի համար ավելի լավ քաղաքացի կարող են դառնալ:*

- Դուք լա՞վ լրագրող եք:

*- Ես սովոր եմ եղել ամբողջ ուսումնառության ընթացքում միայն գերազանց գնահատականներ ստանալ: Մոսկվայում անվանական թոշակառու եմ եղել: Հետագայում դարձել թեկնածու, ապա՝ դոկտոր: Սակայն ուսումնառությունը ինձ համար ինքնանպատակ չի եղել: Նպաստել է իմ մասնագիտական կարողությունների աճին: Իսկ թե ինչպիսի լրագրող եմ, գիտի ընթերցողը, հեռուստադիտողը, ռադիոլսողը: Ասեմ միայն, որ շուրջ 1000 հեռուստահաղորդում եմ պատրաստել, գրեթե նույնքան տպագիր հոդված հրատարակել, ստեղծել մի շարք հեղինակային հաղորդաշարեր, հրատարակել 14 գիրք... Մոռացա նշել հարյուրավոր ռադիոհաղորդումների մասին: 1987 թվականին պաշտպանած իմ թեկնածուական դիսերտացիան, որ նվիրված էր Հայաստանի հեռուստատեսությանը, շուրջ 17 տարի մնաց առաջինն ու վերջինը ոլորտում: Բարեբախտաբար վերջին տարիներին երկու-երեք աշխատանք արդեն պաշտպանվել է: Նաեւ առիթ ունեցա այդ գծով առաջին դոկտորականը պաշտպանել 2004 թվականին: Իմ հրատարակած գրքերի մեծ մասը վերաբերում է հեռուստատեսության պատմությանը եւ առանձնահատկությունների ու զարգացման հեռանկարների ուսումնասիրությանը: Երկար տարիներ առիթ եմ ունեցել դասավանդել Մոսկվայի պետական համալսարանում, Համամիութենական կինոյի ինստիտուտում, Երեւանի պետական համալսարանում, այժմ դասավանդում եմ Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետում: Այս տարի ավարտական կուրս ունեմ, արվեստանոցի ղեկավար եմ, փորձում եմ, այն ինչ գրքերում եմ արտահայտում, գործնականում փոխանցել ուսանողներին: Մոսկվայում պատրաստվում եմ հրատարակել հեռուստատեսությանը եւ պրակտիկային նվիրված գիրք, որի օրինակները, բնականաբար, վերցված են հայկական իրականությունից: Գիրքը պատրաստ է, հուսով եմ, որ այն այս տարի լույս կտեսնի:*



- Պարոն Երիցյան, ես գիտակցաբար չեմ հարցնում՝ դուք լա՞վ նախարար էիք, թե ոչ, լա՞վ խորհրդական եք, թե ոչ, լա՞վ քաղաքական գործիչ եք, թե ոչ: Որովհետեւ ուզում եմ հոբելյանի առիթով ներկայացնել Սերգո Երիցյան անհատականությանը՝ իբրեւ քաղաքացի, իբրեւ մարդ, իբրեւ գիտնական... Որովհետեւ մեր ընթերցողը պարբերաբար առիթներ է ունեցել ծանոթանալու Ձեզ հետ՝ իբրեւ պաշտոնյայի...

*- Լավ, այդ դեպքում Ձեր փոխարեն ինքս ինձ հարցնեմ. ճամփաբաժա՞ն է արդյոք 50 տարին: Եվ պատասխանեմ՝ ո՛չ: Մարդ երբեք ճամփաբաժանի մասին չպիտի մտածի: Այս օրերին դժվարությամբ եմ պատասխանում լրագրողների նման հարցերին: Կյանքը շարունակվում է... Ուրիշ բան է, երբ դու փորձում ես, ինչպես արեցինք հիմա, անցած ճանապարհդ հանգրվանային հանրագումարների բերելու... Անշուշտ, կգա նաեւ ամբողջությամբ հիշողություններով ապրելու, հուշեր գրելու ժամանակը... Բայց տա Աստված, որ այդ ժամանակը ուշ գա:*

- Դուք ինչպե՞ս եք նշում Ձեր ծննդյան օրը:

- Սովորաբար, իմ ծննդյան օրերը նշում եմ ընկերներիս հետ, ընտանիքիս անդամների հետ... Անկեղծ ասած, ես ինքս հրավերքներ չեմ կազմակերպում, բայց բազմաթիվ հյուրեր եմ ունենում... Որպես կանոն՝ այդ օրը ես անցկացնում եմ տանը եւ փորձում եմ ամեն բան անել, որ իսկապես օրը վերածվի տոնի, ոչ միայն ինձ համար, այլեւ՝ բոլոր մասնակիցների... Մեզ տոներն են պակասում, իսկապես պայծառ, անքեն, բարի պահերը, որ մարդուն կարող են լավատեսություն, հավատ, հույս, կենսախնդություն պարգեւել մի ողջ կյանքի համար... Եվ իմ ծննդյան օրվա առթիվ, թող որ ես էլ իմ կողմից ինձ համար շատ սիրելի «Կրթություն» թերթի ընթերցողներին ուղղեմ այս մաղթանքը. ձեզ տոն եմ մաղթում եւ բոլոր տոները ուրախ սրտով տոնելու տրամադրություն:

**Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ**

**«Կրթություն»,6-ը հունիսի, թիվ 28-30, 2007 թ.**

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

**Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2023 թվականի հունիսի 9-ի No641-Ա հրամանի հավելվածի**

## ՀՀ սահմանադրություն

**Հարց 1.** Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները եւ պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են՝

*- Սահմանադրությամբ կամ օրենքներով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 6:*

**Հարց 2.** Ո՞ր օրենքն ունի հետադարձ ուժ:

*- Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 72:*

**Հարց 3.** Ո՞ր օրենքները եւ այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

*- Անձի իրավական վիճակը վատթարացնող:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 73, մաս 1 :*

**Հարց 4.** Տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք ունի՝

*- Յուրաքանչյուր ոք՝ առանց պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության եւ անկախ պետական սահմաններից, տեղեկատվության որեւէ միջոցով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, մաս 1:*

**Հարց 5.** Նշվածներից ո՞ր դեպքում է հանցագործության համար մեղադրվողը համարվում անմեղ:

*- Քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 66:*

**Հարց 6.** Հայաստանի Հանրապետությունում գործում են՝

*- Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաեւ վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 163, մաս 1:*

**Հարց 7.** Մտավոր սեփականությունը պաշտպանվում է՝

*- օրենքով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 60, մաս 7:*

**Հարց 8.** Նշվածներից ո՞ր մարմիններն են ՀՀ-ում իրականացնում արդարադատություն:

*- Միայն դատարանները՝ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 162, մաս 1:*

**Հարց 9.** Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում ՀՀ քաղաքացիության ձեռքբերման եւ դադարեցման կարգը՝

*- Օրենքով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 47, մաս 6:*

**Հարց 10.** Ո՞վ է ստորագրում կառավարության որոշումները՝

*- ՀՀ վարչապետը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 153, մաս 2*

**Հարց 11.** Նշվածներից ո՞ր դատարանն է օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

*- Սահմանադրական դատարանը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 168, կետ 12:*

**Հարց 12.** Ո՞վ է նշանակում եւ ազատում մարզպետներին:

*- ՀՀ կառավարությունը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 160, մաս 2:*

**Հարց 13.** Ո՞վ ունի կրթության իրավունք:

*- Յուրաքանչյուր ոք:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1:*

**Հարց 14.** Ո՞ր իրավական ակտով են սահմանվում պարտադիր կրթության ծրագրերը եւ տեւողությունը:

*- Օրենքով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1:*

**Հարց 15.** Ո՞ր կրթությունն է անվճար պետական ուսումնական հաստատություններում:

*- Միջնակարգ:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1:*

**Հարց 16.** Ո՞ր տարիքի երեխաներին է արգելվում ընդունել մշտական աշխատանքի՝

*- Մինչեւ 16 տարեկան:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 57, մաս 4:*

**Հարց 17.** Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում համայնքի բյուջեի եկամուտների ձեւավորման եւ ծախսերի իրականացման կարգը:

*- Օրենքով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 185, մաս 2:*

**Հարց 18.** Որո՞նք են ՀՀ վարչատարածքային միավորները:

*- Մարզերը եւ համայնքները:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 121:*

**Հարց 19.** Ովքե՞ր չեն կարող ընտրել, ընտրվել եւ մասնակցել հանրաքվեին:

*- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաեւ դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված եւ պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաեւ այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված եւ պատիժը կրող անձինք:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 48, մաս 4:*

**Հարց 20.** Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքն ո՞ւմ է պատկանում:

*- Պատգամավորներին, Ազգային ժողովի խմբակցություններին եւ Կառավարությանը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 109, մաս 1*

**Հարց 21.** Ո՞ր պաշտոնատար անձանցից է կազմված ՀՀ կառավարությունը:

*- Վարչապետից, փոխվարչապետներից եւ նախարարներից:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 147 մաս 1:*

**Հարց 22.** Ո՞վ է տնօրինում համայնքի սեփականությունը եւ ինչպես:

*- Համայնքի ավագանին՝ օրենքով սահմանված կարգով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 184, մաս 3*

**Հարց 23.** Ո՞վ է նշանակում հանրաքվեն:

*- ՀՀ Նախագահը:*

*Նույն տեղում, հոդված 206:*

**Հարց 24.** Նշվածներից որ բնագավառներն են գտնվում պետության հոգածության եւ պաշտպանության ներքո:

*- Հայոց լեզուն եւ մշակութային ժառանգությունը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 15, մաս 2:*

**Հարց 25.** Հայաստանի Հանրապետության զինանշանն է՝

*- Կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, եւ պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը եւ առյուծը, իսկ վահանից ներքեւ պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա եւ ժապավեն:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 21, մաս 2:*

**Հարց 26.** Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են՝

*- ՀՀ դրոշը, ՀՀ զինանշանը, ՀՀ օրհներգը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 21:*

**Հարց 27.** Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են՝

*- Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը եւ սահմանների անձեռնմխելիությունը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 14, մաս 1:*

**Հարց 28.** Ո՞ւմ կողմից է ընտրվում ՀՀ Նախագահը, ի՞նչ ժամկետով:

*- Հանրապետության Նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ յոթ տարի ժամկետով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 124, մաս 1 եւ հոդված 125, մաս 1:*

**Հարց 29.** Ո՞ւմ առաջարկությամբ եւ ո՞վ է Կառավարության կազմում կատարում փոփոխություններ:

*- Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 131:*

**Հարց 30.** Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ հավասարապես պաշտպանվում են՝

*- Սեփականության բոլոր ձեւերը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 10, մաս 1:*

**Հարց 31.** Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով եւ ո՞ր դեպքում՝

*- Անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմնին ներկայացնելու նպատակով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 27, մաս 1, կետ 5:*

**Հարց 32.** Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարո՞ղ է սահմանափակվել:

*- Կարող է՝ միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 34, մաս 3:*

**Հարց 33.** Ո՞ր պատիժներն են արգելվում:

*- Մարմնական:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 26, մաս 2:*

**Հարց 34.** Ծնողներն իրավունք ունեն եւ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների՝

*- Դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 36, մաս 1:*

**Հարց 35.** Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել՝

*- Բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 192, մաս 2:*

## *«Կրթության մասին»* ՀՀ օրենք

**Հարց 36.** Ինչպե՞ս է սահմանվում *«կրթություն»* հասկացությունը:

*- Անձի, հասարակության եւ պետության շահերից ելնող ուսուցման եւ դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 1*

**Հարց 37.** Ի՞նչ ենք հասկանում՝ *«ուսուցում»* ասելով:

*- Կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, 1.1 կետ*

**Հարց 38.** Ինչպե՞ս է սահմանվում *«ուսումնական հաստատություն»* հասկացությունը:

*- Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր եւ ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 4*

**Հարց 39.** Ո՞ր ուսումնական հաստատությունն է կոչվում կրթահամալիր:

*- Տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորումը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 8*

**Հարց 40.** Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը՝

*- Կրթության զարգացման պետական ծրագիրն է:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 4*

**Հարց 41.** Ո՞ր մարմինը եւ ո՞ւմ ներկայացմամբ է հաստատում կրթության զարգացման պետական ծրագիրը:

*- Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 4*

***շարունակությունը էջ 10***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 9*

**Հարց 42.** Ո՞ւմ եւ ինչպե՞ս է պետությունն ապահովում տարրական ընդհանուր կրթական ծրագրով նախատեսված դասագրքերով:

*- Տարրական հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների առաջինից չորրորդ դասարանների սովորողներին, պետական բյուջեի միջոցների հաշվին, անվճար:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 4*

**Հարց 43.** Կրթության բովանդակությունն ապահովում է՝

*- Սովորողների աշխարհաճանաչման ձեւավորումը գիտելիքների եւ կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 1*

**Հարց 44.** Կրթության բովանդակությունն ապահովում է՝

*- Սովորողների կողմից ազգային եւ համամարդկային մշակութային արժեքների յուրացումը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 2*

**Հարց 45.** Կրթության բովանդակությունն ապահովում է՝

*- Հասարակության կատարելագործումը եւ ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձեւավորումը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 3*

**Հարց 46.** Կրթության բովանդակությունն ապահովում է՝

*- Հասարակության մտավոր ներուժի եւ աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 4*

**Հարց 47.** Ե՞րբ է սկսվում եւ ավարտվում ուսումնական տարին:

*- Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից եւ ավարտվում է օգոստոսի 31-ին:*

*Հանրակրթության մասին» օրենք, հոդված 15, մաս 1*

**Հարց 48.** Ո՞ր մարմինը կարող է հիմնադրել ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 29, մաս 4*

**Հարց 49.** Նշվածներից ո՞վքեր կարող են լինել ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր:

*- Ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 29, մաս 3*

**Հարց 50.** Ուսումնական հաստատությունը ե՞րբ է համարվում ստեղծված:

*- Հիմնադրի (հիմնադիրների) կողմից հաստատության կանոնադրությունը հաստատելու եւ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 30, մաս 2*

**Հարց 51.** Ինչպե՞ս է վերակազմակերպվում ուսումնական հաստատությունը:

*- Միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման եւ վերակազմավորման ձեւերով:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 33, մաս 2*

**Հարց 52.** Ե՞րբ է ուսումնական հաստատության լուծարումը համարվում ավարտված, իսկ դրա գոյությունը՝ դադարեցված:

*- Իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում այդ մասին գրառում կատարելու պահից:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 35, մաս 4*

**Հարց 53.** Նշվածներից ո՞րն է կրթության բնագավառում՝ ՀՀ կառավարության իրավասություններից:

*- Պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների հաստատումը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 36, կետ 5*

**Հարց 54.** Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում կրթական քաղաքականության իրականացումը:

*- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 36, կետ*

**Հարց 55.** Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիրը, պետական կրթական չափորոշիչների ձեւավորման եւ հաստատման կարգը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 1*

**Հարց 56.** Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի եւ ուսումնական ձեռնարկների մշակումն ու հրատարակումը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 3*

**Հարց 57.** Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 5*

**Հարց 58.** Նշվածներից ո՞ր մարմինն է համաձայնություն տալիս պետական համապատասխան լիազորված մարմնի կողմից ուսումնական հաստատությունների վերակազմակերպման եւ լուծարման վերաբերյալ:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 15.1*

**Հարց 59.** Նշվածներից ո՞ր մարմինն (կամ ղեկավարն) է համակարգում եւ վերահսկում դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը եւ ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում:

*- Մարզպետը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 38, մաս 3*

**Հարց 60.** Հանրակրթության բնագավառում նշվածներից ո՞րն է մարզպետի իրավասություններից:

*- Պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցման, շահագործման եւ պահպանման ապահովումը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 38, կետ 4*

**Հարց 61.** Նշվածներից ո՞րն է հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասություններից:

*- Ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան՝ աջակցել համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 39, կետ 1*

**Հարց 62.** Ի՞նչ վճարովի այլ աշխատանք կարող է միաժամանակ կատարել պետական ուսումնական հաստատության տնօրենը:

*- Գիտամանկավարժական եւ ստեղծագործական:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 40, մաս 5, 2-րդ պարբ.*

**Հարց 63.** Ի՞նչ նորմատիվ ակտով են սահմանվում ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները, դրանց ձեւավորման կարգը եւ լիազորությունները:

*- Ուսումնական հաստատության կանոնադրությամբ:*

*Նույն տեղում, հոդված 40, մաս 4*

**Հարց 64.** Ինչպե՞ս է իրականացվում կրթական ծրագրերի եւ նախադպրոցական ծառայությունների լիցենզավորումը:

*- Օրենքով եւ ՀՀ կառավարության սահմանած կարգով:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 41, մաս 3*

**Հարց 65.** Ի՞նչերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

*- Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը եւ նախադպրոցական ծառայությունը:*

*Նույն տեղում, հոդված 41, մաս 1*

**Հարց 66.** Ո՞ր դեպքում կարող են իրականացվել օրենքով նախատեսված կրթական ծրագրեր:

*- Միայն լիցենզիայի առկայության դեպքում:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 41, մաս 1*

**Հարց 67.** Ու՞մ է ուսումնական հաստատությունը հանձնում համապատասխան փաստաթուղթ (վկայական, ատեստատ, դիպլոմ):

*- Կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած եւ ամփոփիչ ատեստավորում անցած անձանց:*

*Նույն տեղում, հոդված 44, մաս 1*

**Հարց 68.** Ո՞ր պահից են ոչ պետական հանրակրթական հաստատությունները պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու իրավունք ստանում:

*- Լիցենզավորման պահից:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 44, մաս 3*

**Հարց 69.** Ի?նչ նպատակներով կարող է օգտագործվել պետական ուսումնական հաստատությունների գույքն՝ օտարվելու դեպքում:

*- Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 45, մաս4*

**Հարց 70.** Կառավարման ո՞ր մարմինն է հավելյալ վարձատրություն սահմանում սահմանամերձ, բարձրլեռնային եւ լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 50, մաս 3*

**Հարց 71.** Ո՞րն է տարրական դպրոցի նպատակը:

*- Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության եւ տրամաբանության հիմքերի, ուսումնառության եւ աշխատանքային նախնական հմտությունների ձեւավորմանը, ազգային եւ համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:*

*Նույն տեղում, հոդված 18, մաս 4*

**Հարց 72.** Ո՞րն է միջին դպրոցի նպատակը:

*- Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի եւ բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձեւավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության եւ հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:*

*Նույն տեղում, հոդված 18, մաս 5*

**Հարց 73.** Ու՞մ վրա չի տարածվում պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը:

*- Պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի խմբերի վրա:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 18, մաս 7*

**Հարց 74.** Ո՞ւմ վրա չի տարածվում պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման՝ օրենքով սահմանափակված տարիքային սահմանափակումը:

*- Պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար տարիքային սահմանափակումը չի տարածվում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձեւով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի:*

*«Կրթության մասին» օրենք, հոդված 18, մաս 7*

## *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենք

**Հարց 75.** Ինչպե՞ս է սահմանվում *«հանրակրթական պետական չափորոշիչ»* հասկացությունը:

- Նորմատիվ փաստաթուղթ, որը, ըստ կրթական ծրագրի աստիճանների, սահմանում է սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն եւ առավելագույն ծավալը, սովորողների գնահատման համակարգի սկզբունքները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները եւ հանրակրթական միջնակարգ կրթության ծրագրի շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները (կոմպետենցիաները):

*«Հանրակրթության մասինե օրենք, հոդված 3, մաս 1, կետ 5*

**Հարց 76.** Ինչպե՞ս է սահմանվում *«հանրակրթական ծրագիր (հիմնական եւ լրացուցիչ)»* հասկացությունը:

*- Առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների եւ ուսուցման կազմակերպման ձեւերի ամբողջություն, որոնք ապահովում են հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներն ու կարողունակությունները:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 6*

***շարունակությունը էջ 11***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը` էջ 10*

**Հարց 77.** Ինչպե՞ս է սահմանվում *«հանրակրթական դպրոց»* հասկացությունը:

*- Մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում` հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 8*

**Հարց 78.** Ո՞րն է տարրական կրթությունը:

*- Պարտադիր կրթության առաջին մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 2*

**Հարց 79.** Ո՞րն է հիմնական կրթությունը:

*- Պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին եւ երկրորդ աստիճանները:*

*«Հանրակրթության մասինե օրենք, հոդված 3, մաս 1, կետ*

**Հարց 80.** Ո՞րն է միջնակարգ կրթությունը:

*- Հանրակրթության երրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 4*

**Հարց 81.** Ինչպես է ձեւակերպվում հեռավար (դիստանցիոն) կրթությունը:

*- Կրթական ծրագրի իրականացման ձեւ, որի շրջանակներում անմիջական եւ ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի եւ ուսուցչի միջեւ իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով` բացառիկ դեպքերում եւ որոշակի ժամկետով:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.1*

**Հարց 82.** Ո՞րն է կրեդիտային համակարգի ձեւակերպումը:

*- Կրեդիտային համակարգը միջնակարգ կրթության ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ եւ ամփոփիչ գնահատման, կրթական ծրագրերի յուրացման կրեդիտների միջոցով չափման, հաշվառման եւ փոխանցման համակարգ է:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.2*

**Հարց 83.** Այլընտրանքային ծրագիրը`

*- հանրակրթական ծրագրից ուսումնական պլանով, ուսուցման կազմակերպման ձեւով եւ առարկայական ծրագրերով տարբերվող, հանրակրթական պետական չափորոշչի վերջնարդյունքներն ու կարողունակություններն ապահովող եւ օրենսդրությամբ սահմանված կարգով որպես այլընտրանքային երաշխավորված հանրակրթական ծրագիր:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.3*

**Հարց 84.** Թվարկվածներից որն է համարվում այլընտրանքային կրթական ծրագիր:

*- Միջազգային կրթական ծրագիրը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.3*

**Հարց 85.** Ո՞րն է համարվում միջազգային կրթական ծրագիր:

*- Միջազգային պայմանագրի հիման վրա կամ տասը եւ ավելի օտարերկրյա պետություններում իրականացվող հանրակրթական ծրագիրը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.3*

**Հարց 86.** Ռազմագիտության, սպորտի, արհեստների, արվեստի կամ գիտության որեւէ բնագավառում հանրակրթական հիմնական մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:

*- Մասնագիտացված հանրակրթական դպրոց:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 9*

**Հարց 87.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, զարգացման ապահովման համար կրթական ծրագիր եւ աջակցություն իրականացնող մանկավարժահոգեբանական եւ այլ օժանդակող կրթական ծառայություններ մատուցող ուսումնական հաստատության տեսակ.

*- Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10*

**Հարց 88.** Ո՞րոնք են համարվում կրթության առանձնահատուկ պայմաններ:

*- անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի եւ ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաեւ մանկավարժական, սոցիալական եւ այլ ծառայությունների ամբողջությունը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 10.1*

**Հարց 89.** Ո՞վ է համարվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ:

*- Բացառիկ ընդունակություններ ունեցող անձը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.2*

**Հարց 90** Ի՞նչ է ներառական կրթությունը:

*- Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում` կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների եւ հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության եւ հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.3*

**Հարց 91.** Սովորողին, նրա ծնողին եւ մանկավարժական աշխատողին ցուցաբերվող ուսումնամեթոդական, հոգեբանական եւ մանկավարժական աջակցությունը համարվում է`

*- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 10.4*

**Հարց 92.** Ինչպե՞ս է անվանվում գործընթացը, որի ժամանակ կատարվում է երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում:

*- Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 10.5*

**Հարց 93.** Ո՞ր կազմակերպությունն է գնահատում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

*- մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 10.6*

**Հարց 94.** Ինչպե՞ս է կոչվում հանրակրթության պետական եւ առարկայական չափորոշիչների, ծրագրերի եւ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթը:

*- անհատական ուսուցման պլան:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.8*

**Հարց 95.** կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատողը համարվում է`

*- ուսուցչի օգնական:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 10.9*

**Հարց 96.** Ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների` զբաղեցրած պաշտոնին համապատասխանության որոշման գործընթաց.

*- ուսուցչի ատեստավորում:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 14*

**Հարց 97.** Ինչպե՞ս է ձեւակերպվում ուսուցչի մասնագիտական զարգացման եւ գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողությունների, պատասխանատվության նկարագիրը.

*- մասնագիտական չափանիշ:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 14.3*

**Հարց 98.** Ինչպե՞ս է սահմանվում *«հեռավար (դիստանցիոն) կրթություն»* հասկացությունը:

*- Կրթական ծրագրի իրականացման ձեւ, որի շրջանակներում անմիջական եւ ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի եւ ուսուցչի միջեւ իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով` բացառիկ դեպքերում եւ որոշակի ժամկետով:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 6.1*

**Հարց 99.** Ինչպե՞ս է կազմակերպվում ՀՀ ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը:

*- Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով` հայերենի պարտադիր ուսուցմամբ:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 10*

**Հարց 100.** Ո՞րն է հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը:

*- Կրթության զարգացման պետական ծրագիրը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 7*

**Հարց 101.** Հանրակրթության բնագավառում պետությունը ո՞ր սկզբունքի ապահովումն է երաշխավորում:

*- Անկախ կազմակերպական-իրավական ձեւից` ուսումնական հաստատությունների եւ դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 5, մաս 2, կետ 7*

**Հարց 102.** Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի`

*- ուսումնական բնագավառներն ու կրթության բովանդակության բաղադրիչները:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 1*

**Հարց 103.** Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի`

*- ուսումնական պլանների ընդհանրական կառուցվածքը եւ առարկայացանկերի ձեւավորման հիմնական սկզբունքները.*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 2*

**Հարց 104.** Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի`

*- սովորողների գնահատման սկզբունքներն ու ձեւերը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 3*

**Հարց 105** Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի`

*- շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները` կարողունակությունները (կոմպետենցիաները) եւ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 4*

**Հարց 106.** Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատում է`

*- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 3*

**Հարց 107.** Ի՞նչ է ներառում հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքը

*- Ներառում է ուսումնական բնագավառները, դրանց հատկացվող ժամաքանակները, սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն եւ առավելագույն ծավալը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 4*

**Հարց 108.** Ուսումնական բնագավառներին հատկացվող պարտադիր նվազագույն ժամաքանակը ավագ դպրոցում ինչքա՞ն պետք է լինի:

*- Չի կարող լինել ընդհանուր նորմատիվային ժամաքանակի 30 տոկոսից պակաս:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 5*

**Հարց 109.** Ի՞նչ է ներառում պետական բաղադրիչը:

*- Պետական բաղադրիչը ներառում է պարտադիր առարկայացանկը եւ դրան հատկացվող ժամաքանակները:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 5, կետ 1*

**Հարց 110.** Ո՞ր մարմինն է հաստատում ուսումնական հաստատության սահմանած առարկաների ծրագրերը:

*- Ուսումնական հաստատության սահմանած առարկաների ծրագրերը սահմանված կարգով երաշխավորում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 5, 2-րդ ենթակետ*

**Հարց 111.** Ի՞նչ է սահմանում անհատական (ընտրովի) բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.

*- Անհատական (ընտրովի) բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմինը սահմանում է տվյալ դասարանում սովորողի ընտրությամբ հետազոտական աշխատանքներին, խմբակներին հատկացված նվազագույն ժամաքանակները` ըստ անհրաժեշտության համագործակցելով այլ հաստատությունների հետ:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 5, 3-րդ ենթակետ*

*շարունակությունը էջ 12*

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 11*

**Հարց 112.** Ի՞նչի հիման վրա է մշակում եւ հաստատում Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն իր ուսումնական պլանը.

*- Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքի հիման վրա մշակում եւ հաստատում է իր ուսումնական պլանը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 5*

**Հարց 113.** Ինչի՞ համար է նախատեսված դպրոցական բաղադրիչի ժամաքանակը:

*- դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական հաստատության սահմանած առարկաներին, ինչպես նաեւ կարող է հատկացվել պետական բաղադրիչով սահմանված առարկաներին:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 5, կետ 2*

**Հարց 114.** Ուսումնական հաստատությունները ինչպե՞ս կարող են իրականացնել միջազգային ծրագրեր:

*- Բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

**Հարց 115.** Ուսումնական հաստատությունները ինչպե՞ս չեն կարող իրականացնել միջազգային ծրագրեր:

*- Լիազոր մարմնի որոշումով:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

**Հարց 116.** Ուսումնական հաստատությունները ինչպե՞ս կարող են օտար լեզուներով կրթություն կազմակերպել:

*- Բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

**Հարց 117.** Ուսումնական հաստատությունները ինչպե՞ս չեն կարող օտար լեզուներով կրթություն կազմակերպել:

*- Բացառապես ՀՀ վարչապետի որոշումներով:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

**Հարց 118.** Ո՞ր ուսումնական հաստատությունը կարող է օտար լեզվով կրթական ծրագիր իրականացնել:

*- Բացառապես ոչ պետական ուսումնական հաստատությունները, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերով ստեղծված ուսումնական հաստատությունները:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

**Հարց 119.** Ի՞նչ սկզբունքով են կառուցվում հանրակրթական հիմնական ծրագրերը:

*- կառուցվում են հաջորդականության եւ շարունակականության սկզբունքով:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 7*

**Հարց 120.** Քանի՞ տարի է միջնակարգ կրթության 2-րդ աստիճանի տեւողությունը:

*- 5 տարի*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 8*

**Հարց 121** Քանի՞ տարի է միջնակարգ կրթության տեւողությունը:

*- 12 տարի*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7*

**Հարց 122.** Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 5*

**Հարց 123.** Ի՞նչ է իրականացնում պետական ուսումնական հաստատության խորհուրդը հաստատության զարգացման ծրագրի կատարման մասով.

*- աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը.*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1, կետ 1, 1-ին ենթակետ*

**Հարց 124.** Ի՞նչ է իրականացնում պետական ուսումնական հաստատության խորհուրդը հաստատության զարգացման ծրագրի կատարման մասով.

*- լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը եւ տալիս եզրակացություն.*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1, 1-ին կետ*

**Հարց 125.** Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամը պարտավոր է՝

*- ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել խորհրդի նիստերին, գործել բարեխղճորեն՝ ի նպաստ երեխայի շահերի եւ կրթության արդյունավետության.*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 1, կետ 1*

**Հարց 126.** Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամի լիազորությունները չեն դադարեցվում՝

*- մեկ տարվա ընթացքում խորհրդի առնվազն երկու նիստի չներկայանալու դեպքում:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 3*

**Հարց 127.** Պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար դիմող անձի հավաստագրումն ի՞նչ փուլով է անցկացվում:

*- փաստաթղթերի համապատասխանության ճանաչում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած փաստաթղթերի ցանկի:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, 4-րդ կետ, 1-ին ենթակետ*

**Հարց 128.** Պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար դիմող անձի հավաստագրումն ի՞նչ փուլով է անցկացվում.

*- մասնակցություն վերապատրաստումներին՝ դիմողի նախաձեռնությամբ.*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, 4-րդ կետ, 2-րդ ենթակետ:*

**Հարց 129.** Պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար դիմող անձի հավաստագրումն ի՞նչ փուլով է անցկացվում.

*- քննություն՝ թեստավորման միջոցով:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, 4-րդ կետ, 3-րդ ենթակետ*

**Հարց 130.** Կարող է արդյոք ուսումնական հաստատությունը իրականացնել վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթական ծրագրեր:

*- Այո՛ համաձայն իր կանոնադրության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 14, մաս 4*

**Հարց 131** Ո՞վ է սահմանում պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տեւողությունը:

*- սահմանում է ուսումնական հաստատությունը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 15, մաս 4,*

**Հարց 132.** Ո՞վ է սահմանում ոչ պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տեւողությունը:

*- հիմնադիրը*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 15, մաս 4*

**Հարց 133.** Սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է:

*- տնօրենի հրամանով՝*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 1*

**Հարց 134.** Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է՝

*- տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին գործուղման հետեւանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին.*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 1.2*

**Հարց 135.** Ի՞նչն է արգելված օրենքով՝ հանրակրթական դպրոցի առաջին դասարան երեխայի ընդունելության ժամանակ:

*- գիտելիքների ստուգումը՝*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 3*

**Հարց 136.** Ո՞ր երեխաներն են ընդունվում ուսումնական հաստատության առաջին դասարան:

*- Ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 2*

**Հարց 137.** Ինչպե՞ս է կազմակերպվում սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը:

*- Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 7*

**Հարց 138.** Երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են՝

*- երեք մակարդակում:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 1*

**Հարց 139.** Թվարկված մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից ո՞ր մակարդակն է տրամադրվում հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:

*- հանրապետական մակարդակը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 1, կետ 3*

**Հարց 140.** Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները՝

*- կազմում են համապատասխան եզրակացություն՝ երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ.*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 5, կետ 2*

**Հարց 141.** Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը՝

*- համակարգում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքները:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 6, կետ 3*

**Հարց 142.** Ո՞վ է սահմանում Տարածքային եւ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների օրինակելի կանոնադրությունները:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 7*

**Հարց 143.** ի՞նչպիսի խրախուսման ձեւ կարող է սահմանել ուսումնական հաստատությունը սովորողների համար:

*- բարոյական եւ նյութական խրախուսման ձեւեր:*

*Նույն տեղում, հոդված 23,*

**Հարց 144.** Ո՞վ կարող է լինել ուսումնական հաստատության ուսուցիչ:

*- Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 1*

**Հարց 145.** Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին ո՞վ կարող է դիմել:

*- Տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը:*

*Նույն տեղում, հոդված 26, մաս 2, 1-ին ենթակետ*

**Հարց 146.** Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնո-լոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների համար առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին ո՞վ կարող է դիմել:

*- Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը? աշխատանքի ընդունվելուց հետո? մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 2, 2-րդ ենթակետ*

**Հարց 147.** Ի՞նչ փոփոխությունների հիմք է հանդիսանում ուսուցչի կամավոր ատեստավորումը:

*- Կամավոր ատեստավորման գործընթացում ուսուցչի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է ուսուցչի դրույքաչափի փոփոխության եւ հինգ տարի ժամկետով հավելավճարի սահմանման համար:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 12*

***շարունակությունը էջ 13***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 12*

**Հարց 148.** Ի՞նչը կարող է հիմք հանդիսանալ ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:

*- Հերթական եւ կամավոր ատեստավորման հանձնաժողովների՝ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 13*

**Հարց 149.** Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը ի՞նչի հիման վրա է սահմանում ուսուցչի տարակարգերը:

*- Ուսուցչի տարակարգերը համապատասխանում են ուսուցչի մասնագիտական չափանիշներին, որոնք սահմանում է կրթության պետական կառավարման լիա-զորված մարմինը՝ հիմք ընդունելով ուսուցչի գիտելիքների, մանկավարժական աշխատանքային հմտությունների եւ ունակությունների ծավալը, ստեղծագործական-հետազոտական գործունեության արդյունավետությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, մանկավարժական գործունե-ության որակական այլ ցուցանիշներ (ներառյալ՝ պարգեւատրումը, համապատասխան մրցույթների մասնակցությունը, մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումները եւ այլն):*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 20*

**Հարց 150.** Պահպանվո՞ւմ են արդյոք ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխվող ուսուցչի տարակարգը եւ կամավոր ատեստավորման արդյունքով սահմանվող դրույքաչափը:

*- Ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխվող ուսուցչի տարակարգը եւ կամավոր ատեստավորման արդյունքով սահմանվող դրույքաչափը եւ հավելավճարը պահպանվում են:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 26*

**Հարց 151.** Ո՞ր մարմինն է հաստատում լիազորված մարմնի՝ պետական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումը իրավաբանական անձին պատվիրակելու կարգը:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 6.1*

**Հարց 152.** Ո՞ր մարմինն է հաստատում պետական ուսումնական հաստատության համակարգողի նշանակման կարգը:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 6.2*

**Հարց 153.** Ո՞ր մարմինն է սահմանում հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման կարգը:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 12.1*

**Հարց 154.** Ո՞ր մարմինն է սահմանում ուսուցիչների կամավոր ատեստավորման կարգը:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 12.3*

**Հարց 155.** Ո՞ր մարմինն է հաստատում կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի եւ դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձեւավորման կարգը:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 12.4*

**Հարց 156.** Ո՞ր մարմինն է սահմանում է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման կարգը:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 18.1*

**Հարց 157** Ո՞ր մարմինն է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատության տնօրենին եւ համակարգողին եւ նրանց հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 6.1*

**Հարց 158.** Ո՞ր մարմինն է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով վաղաժամկետ դադարեցնում տնօրենի եւ համակարգողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 6.1*

**Հարց 159** Ո՞ր մարմինն է սահմանում միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման եւ գործարկման կարգը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.3*

**Հարց 160.** Ո՞ր մարմինն է սահմանում հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը:.

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.3*

**Հարց 161.** Ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների եւ մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը):

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.6*

**Հարց 162.** Ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը եւ հաստատում դրանց լրացման (գործածման) կարգերը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.7*

**Հարց 163.** Ո՞ր մարմինն է մշակում եւ հաստատում պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձեւաչափը եւ զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարո-ղական ցուցանիշներն ու պահանջները:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.8*

**Հարց 164.** Ո՞ր մարմինն է սահմանում հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման եւ վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.9*

**Հարց 165.** Ո՞ր մարմինն է սահմանում հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը:.

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.14*

**Հարց 166.** Ո՞ր մարմինն է սահմանում ուսուցչի մասնագիտական չափանիշները:.

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.16*

**Հարց 167.** Ո՞ր մարմինն է սահմանում պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների գնահատման չափանիշները:

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.17*

**Հարց 168.** Ո՞ր մարմինն է սահմանում պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման կարգը:.

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.18*

**Հարց 169.** Ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատության դպրոցական եւ անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի եւ խմբակների երաշխավորման կարգը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.19*

**Հարց 170.** Ո՞ր մարմինն է սահմանում ատեստավորման ենթակա ուսուցչի կողմից հավաքվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափանիշները եւ նվազագույն չափաքանակը:

*- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.20*

**Հարց 171.** Հանրակրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություն չէ՝

*- դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 32, մաս 1, կետ 2*

**Հարց 172.** Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություն չէ:

*- համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացման աջակցմանը:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 32, մաս 1, կետ 1*

**Հարց 173.** Ովքե՞ր են մասնակցում ուսումնական հաստատության ներքին գնահատմանը:

*- Մասնակցում են վարչական եւ մանկավարժական աշխատողները, սովորողները եւ ծնողները:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 34, մաս 2*

**Հարց 174.** Ու՞մ կողմից է կատարվում ուսումնական հաստատության արտաքին գնահատումը:

*- անկախ կազմակերպության:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 34, մաս 5*

**Հարց 175** Ինչպե՞ս է որոշվում շրջանավարտների համապատասխանության աստիճանը հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին:

*- կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կազմակերպած ամփոփիչ ատեստավորման արդյունքներով:*

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 34, մաս 10*

**Հարց 176.** Պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար դիմող անձի հավաստագրումն քանի՞ փուլով է անցկացվում:

*- Մեկ:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, 4-րդ կետ, 3-րդ ենթակետ*

## *«Լեզվի մասին»* ՀՀ օրենք

**Հարց 177.** Ո՞րն է Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն:

*- գրական հայերենն է:*

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված)*

**Հարց 178.** Ինչպե՞ս է բնորոշվում *«պետական լեզու»* հասկացությունը:

*- Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված եւ պետության հոգածությամբ ու հովանավորությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գերակայություն ունեցող լեզու:*

*(Նույն տեղում, 1.1-ին հոդված)*

**Հարց 179.** Ինչպե՞ս է բնորոշվում *«պաշտոնական լեզու»* հասկացությունը:

*- Հայոց լեզվի քերականության, բառապաշարի, արտասանության կանոններին ենթարկվող, պաշտոնական գործառույթներին եւ հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզու:*

*(Նույն տեղում, 1.1-ին հոդված)*

**Հարց 180.** Ո՞րն է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական եւ ուսումնական համակարգերում դասավանդման եւ դաստիարակության լեզուն:

*- Գրական հայերենն է:*

*(Նույն տեղում, 2-րդ հոդված)*

**Հարց 181.** Ինչպե՞ս է կազմակերպվում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը:

*- իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով եւ հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:*

*(Նույն տեղում, 2-րդ հոդված)*

**Հարց 182.** Հայաստանի Հանրապետության տարածքում ո՞վ կարող է հիմնել օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն:

*- Միայն Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:*

*(Նույն տեղում, 2-րդ հոդված)*

**Հարց 183.** Ո՞ր կրթական հաստատություններում են պարտադիր հայոց լեզվի ընդունելության քննությունը եւ հայոց լեզվի ուսուցումը:

*- Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտականտեխնիկական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում:*

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված)*

*շարունակությունը էջ 14*

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 13*

**Հարց 184.** ՀՀ տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել՝

*- Միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

*Նույն տեղում, հոդված 2, 3-րդ պարբ.:*

**Հարց 185.** Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները պարտավոր են՝

*- Գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:*

*«Լեզվի մասին» ՀՀ օրենք, հոդված 4. ա:*

## *«Տեսչական մարմինների մասին»* ՀՀ օրենք

**Հարց 186.** Տեսչական մարմինը ստեղծվում, վերակազմակերպվում եւ նրա գործունեությունը դադարում է՝

*- Օրենքով:*

*«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2:*

**Հարց 187.** Նշվածներից ո՞ր մարմնին է հաշվետու տեսչական մարմնի ղեկավարը:

*- Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին եւ Խորհրդին:*

*«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 2:*

**Հարց 188.** Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատում է՝

*- Հայաստանի Հանրապետության վարչապետը:*

*Նույն տեղում, հոդված 8, մաս 1:*

**Հարց 189.** Նշվածներից ո՞րն է տեսչական մարմնի գործունեության սկզբունք:

*- Հաշվետվողականություն:*

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 4, մաս 1, կետ 3*

**Հարց 190.** Ի՞նչ կարող է ունենալ տեսչական մարմինը:

*- Կառուցվածքային ստորաբաժանումներ:*

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 5, մաս 3*

**Հարց 191.** Նշվածներից ո՞ր լիազորությունն է իրականացնում տեսչական մարմինը:

*- Համապատասխան ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների եւ դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների եւ պարտականությունների մասին տեղեկացումը:*

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 3*

**Հարց 192.** Տեսչական մարմինների եւ դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտը ո՞ր մարմիններին կարող է բողոքարկվել:

*- Ակտն ընդունած տեսչական մարմին կամ դատարան:*

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 9, մաս 1*

**Հարց 193.** Ի՞նչն է հանդիսանում տեսչական մարմինների աշխատանքի հիմք:

*- Մասնագիտական կարողությունները եւ դրանց շարունակական կատարելագործումը:*

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 10, մաս 2*

## ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-L որոշում՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին

**Հարց 194.** Տեսչական մարմինը՝

*- Ստեղծվում, վերակազմակերպվում է, եւ նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:*

*ՀՀ վարչապետի՝ 2018 թ. հունիսի 11-ի N 729-L որոշում, կետ 2:*

**Հարց 195.** Տեսչական մարմնի նպատակն է՝

*- Օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը եւ կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:*

*ՀՀ վարչապետի՝ 2018 թ. հունիսի 11-ի N 729-L որոշում, կետ 8:*

**Հարց 196.** Տեսչական մարմնի խնդիրներն են՝

*- Նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության ոլորտներում ռիսկերի կառավարումը եւ Հայաստանի Հանրապետության օրենքների եւ այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաեւ նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:*

*ՀՀ վարչապետի՝ 2018 թ. հունիսի 11-ի N 729-L որոշում, կետ 9:*

## *«Երեխայի իրավունքների մասին»* ՀՀ օրենք

**Հարց 197.** Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝

*- Հաղորդակցվելու իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգեւոր արժեքներին եւ համաշխարհային մշակույթին:*

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, պարբ. 1:*

**Հարց 198.** Ո՞վ է երեխայի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կրում:

*- Ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչներ:*

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, պարբ. 2:*

**Հարց 199.** Երեխայի հետ ո՞ր տարիքից կարելի է կնքել աշխատանքային պայմանագիր:

*- Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարելի է կնքել16 տարին լրանալուց հետո՝ բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրերի:*

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 19, պարբ. 2:*

**Հարց 200.** Մինչեւ ո՞ր տարիքը լրանալը է արգելվում երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին:

*- Մինչեւ 15 տարին:*

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, պարբ. 2:*

**Հարց 201.** Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝

*- Պատվի եւ արժանապատվության:*

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 22, պարբ. 1*

**Հարց 202.** Ո՞ւմ հետ են համաձայնեցվում երեխայի հանգստի կազմակերպման համար նախատեսված նյութատեխնիկական բազայի կրճատմանն ուղղված գործողությունները:

*- Տեղական ինքնակառավարման մարմինների հետ:*

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 20, պարբ. 3*

**Հարց 203.** Ծնողների (ծնողի) հետ համատեղ չբնակվող յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝

*- Իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ եւ անմիջական շփումներ պահպանելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված դեպքերի:*

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 15*

**Հարց 204.** Ո՞ր մարմիններն են մշակում եւ իրականացնում տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության եւ կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

*- Պետական համապատասխան մարմինները:*

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 11, պարբ. 3*

**Հարց 205.** Ո՞ր իրավական ակտով եւ ի՞նչ նպատակով կարող է սահմանափակվել երեխայի դավանանքի ազատության եւ համոզմունքների արտահայտման իրավունքը:

*- Միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար:*

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 10, պարբ. 4*

**Հարց 206.** Ո՞ւմ է արգելվում երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի:

*- Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին:*

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 9, պարբ.2*

## *«Նորմատիվ իրավական ակտերի մասին»* ՀՀ օրենք

**Հարց 207.** Ինչպե՞ս է սահմանվում *«անհատական իրավական ակտ»* հասկացությունը:

*- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա եւ դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետեւանքներ եւ վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:*

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 5:*

**Հարց 208.** Ինչպե՞ս է սահմանվում *«ներքին իրավական ակտ»* հասկացությունը:

*- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա եւ դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:*

*Նույն տեղում, հոդված 2, մաս 1, կետ 6:*

**Հարց 209.** Ինչպե՞ս է սահմանվում *«ներքին իրավական ակտ»* հասկացությունը:

*- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա եւ դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:*

*Նույն տեղում, հոդված 2, մաս 1, կետ 6:*

**Հարց 210.** Ո՞ր լեզվով են շարադրվում նորմատիվ իրավական ակտերը:

*- Նորմատիվ իրավական ակտերը շարադրվում են պետական լեզվով՝ հայերենով:*

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 1:*

**Հարց 211.** Նորմատիվ իրավական ակտերով սահմանվող ձեւաթղթերը՝

*- Կարող են շարադրվել օտար լեզվով կամ հայերենով՝ օտար լեզվի զուգորդմամբ:*

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 3:*

**Հարց 212.** Ինչպե՞ս են հաշվարկվում նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները:

*- Տարիներով, ամիսներով, օրերով եւ ժամերով:*

*Նույն տեղում, հոդված 31, մաս 1:*

**Հարց 213.** Ո՞վ է օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կրում իրավասու մարմինների տված պաշտոնական սխալ պարզաբանման հետեւանքով պատճառված վնասի համար:

*- Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:*

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 44, մաս 2*

**Հարց 214.** Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ ո՞ր մարմիններն են տալիս պաշտոնական պարզաբանում:

*- Պաշտոնական պարզաբանում տալիս են ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինները, բացառությամբ Ազգային ժողովի ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի:*

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 42, մաս 4*

***շարունակությունը էջ 15***



# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 14*

## ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

**Հարց 215.** Ո՞ր դեպքում է պայմանագիրը համարվում կնքված:

*- Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջեւ պահանջվող ձեւով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 448, մաս 1:*

**Հարց 216.** Ովքե՞ր են պատասխանատվություն կրում տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար:

*- Պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1067, մաս 1:*

**Հարց 217.** Ինչպիսի՞ պատասխանատվություն են կրում տասնչորսից մինչեւ տասնութ տարեկան անչափահասներն իրենց պատճառած վնասի համար:

*- Տասնչորսից մինչեւ տասնութ տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1068, մաս 1:*

**Հարց 218.** Ովքե՞ր պետք է հատուցեն տասնչորսից մինչեւ տասնութ տարեկան անչափահասի պատճառած վնասի համար, եթե նա չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք:

*- Վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1068, մաս 2:*

**Հարց 219.** Ի՞նչ է պարտավորվում վարձատուն վարձակալության պայմանագրով:

*- Վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը եւ (կամ) օգտագործմանը հանձնել գույք:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 606:*

**Հարց 220.** Նշվածներից ո՞րն է վարձակալության պայմանագրին առաջադրվող պահանջներից:

*- Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 610, մաս 1:*

**Հարց 221.** Նշվածներից ո՞րն է անշարժ գույքի վարձակալության պայմանագրին առաջադրվող պահանջներից:

*- Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 610, մաս 2:*

**Հարց 222.** Շենքի կամ շինության վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են՝

*- Պետական գրանցման:*

*Նույն տեղում, հոդված 655:*

## *«Գնումների մասին»* ՀՀ օրենք

**Հարց 223.** *«Գնումների մասին»* ՀՀ օրենքի համաձայն՝ պատվիրատու համարվում են՝

*- ՀՀ Սահմանադրությամբ եւ ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, պետության կամ համայնքների հիմնարկները:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 1, ենթակետ ա:*

**Հարց 224.** Նշվածներից ո՞րն է համարվում գնում:

*- Պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձեւով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 3:*

**Հարց 225.** *«Գնումների մասին»* ՀՀ օրենքի համաձայն՝ նշվածներից ո՞ր մարմինն է համարվում լիազորված մարմին:

*- Պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող ՀՀ գործադիր իշխանության պետական մարմինը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 13:*

**Հարց 226.** Ո՞րքան է գնումների բազային միավորը:

*- Մեկ միլիոն ՀՀ դրամ:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, կետ 21:*

**Հարց 227.** Նշված գործարքներից ո՞ր տեսակի վրա չի տարածվում *«Գնումների մասին»* ՀՀ օրենքի գործողությունը:

*- Աշխատանքային պայմանագրերի:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 4, կետ 1:*

**Հարց 228.** Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

*- Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3, կետ 1:*

**Հարց 229.** Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

*- Մասնագիտական փորձառությունը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3, կետ 2:*

**Հարց 230.** Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

*- Տեխնիկական միջոցները:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3, կետ 3:*

**Հարց 231.** Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

*- Ֆինանսական միջոցները:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 6, մաս 3, կետ 4:*

**Հարց 232.** Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:

*- Աշխատանքային ռեսուրսները:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3, կետ 5:*

**Հարց 233.** Ի՞նչ փաստաթղթով է ձեւավորվում գնահատող հանձնաժողովը:

*- Պատվիրատուի ղեկավարի հրամանով:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 1:*

**Հարց 234.** Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձեւին համապատասխան պարունակում է՝

*- Գնման անհրաժեշտությունը եւ գնման ձեւի ընտրության հիմնավորումը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1, կետ 2:*

**Հարց 235.** Պատվիրատուն ո՞ր մարմին է ներկայացնում գնումների տարեկան հաշվետվությունը:

*- Լիազորված մարմին:*

*Նույն տեղում, հոդված 9, մաս 5:*

**Հարց 236.** Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր:

*- Մրցակցության հավասար պայմանների ապահովում հնարավոր մասնակիցների համար:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 2, կետ 1:*

**Հարց 237.** Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր:

*- Օբյեկտիվորեն հիմնավորված եւ համարժեք լինելը այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 2, կետ 3:*

**Հարց 238.** Ո՞ր դեպքում գնման առարկայի հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի *«կամ համարժեք»* բառերը՝

*- Հղումներ օգտագործելու դեպքում:*

*Նույն տեղում, հոդված 13, մաս 5:*

**Հարց 239.** Նշվածներից ո՞վ է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

*- Գնահատող հանձնաժողովը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 1, կետ 5:*

**Հարց 240.** Ո՞վ է հաստատում գնումների պլանի ձեւը, դրա լրացման, հաստատման եւ հրապարակման կարգը:

*- ՀՀ կառավարությունը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1, կետ 11:*

**Հարց 241.** Շինարարական աշխատանքների գնման համար նշվածներից ո՞ր փաստաթղթերի հիման վրա են նախատեսվում ֆինանսական միջոցներ:

*- Սահմանված կարգով հաստատված եւ փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 4:*

**Հարց 242.** Նշվածներից ո՞վ ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

*- Ցանկացած անձ՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:*

*Նույն տեղում, հոդված 7, մաս 1:*

**Հարց 243.** Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

*- Էլեկտրոնային աճուրդը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 1:*

**Հարց 244.** Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

*- Գնանշման հարցումը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 3:*

**Հարց 245.** Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:

*- Մեկ անձից գնումը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 4:*

## ՀՀ *«աշխատանքային օրենսգիրք»*

**Հարց 246.** Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր:

*- Սեզոնային աշխատանքներ կատարողների հետ:*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 3:*

**Հարց 247.** Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր:

*- Ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ:*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 5:*

**Հարց 248.** Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր:

*- Օտարերկրացիների հետ՝ կացության իրավունքի վավերականության ժամկետով, եթե ՀՀ-ում աշխատելու համար օտարերկրացուց պահանջվում է կացության կարգավիճակ:*

*ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 6:*

**Հարց 249.** Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը լուծելու հիմք:

*- Աշխատողի երկարատեւ անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 180 օր՝ չհաշված հղիության եւ ծննդաբերության արձակուրդի օրերը)*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 7:*

**Հարց 250.** Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը լուծելու հիմք:

*- Աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքը:*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 3:*

**Հարց 251.** Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը լուծելու հիմք:

*- Աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքը:*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 5:*

**Հարց 252.** Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը լուծելու հիմք:

*- Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքը:*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 6:*

***շարունակությունը՝ էջ 16***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 15*

**Հարց 253.** Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը լուծելու հիմք:

*- Անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքը:*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 9:*

**Հարց 254.** Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը լուծելու հիմք:

*- Պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքը:*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 10:*

**Հարց 255.** Ե՞րբ կարող է կարգապահական տույժ կիրառվել, եթե աշխատողը գրավոր բացատրություն չի ներկայացրել:

*- Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն:*

*Նույն տեղում, հոդված 226, մաս 1:*

**Հարց 256.** Եթե աշխատողը աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատանքային հարաբերությունների դադարեցման հետ համաձայն չէ, ապա ի՞նչ ժամկետում կարող է դիմել դատարան:

*- Համապատասխան անհատական իրավական ակտը ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 265, մաս 1:*

**Հարց 257.** Ի՞նչ ակտով են սահմանվում ժամային, օրական, գործավարձային եւ ամսական դրույքաչափերը, աշխատանքի վարձատրության չափն ու պայմանները, աշխատանքի նորմաները:

*- Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով:*

*Նույն տեղում, հոդված 180, մաս 2:*

**Հարց 258.** Նշվածներից ո՞րն է գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը լուծելու հիմք:

*- Աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում:*

*ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 4:*

**Հարց 259.** Որքա՞ն է 16-ից մինչեւ 18 տարեկան աշխատողների աշխատաժամանակի կրճատ տեւողությունը:

*- Շաբաթական մինչեւ 36 ժամ՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 140, մաս 1, կետ 5:*

**Հարց 260.** Որքա՞ն է ամենամյա նվազագույն արձակուրդի տեւողությունը:

*- Ամենամյա նվազագույն արձակուրդի տեւողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 159, մաս 1:*

**Հարց 261.** Որքա՞ն է ամենամյա երկարացված արձակուրդի տեւողությունը՝ բացառիկ դեպքերում:

*- Բացառիկ դեպքերում՝ 35 աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում, եւ 42 աշխատանքային օր՝ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 160:*

**Հարց 262.** Ո՞ր դեպքում է թույլատրվում ամենամյա արձակուրդից հետ կանչելը՝

*- Ամենամյա արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 166:*

**Հարց 263.** Ե՞րբ է իրականացվում ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումը:

*- Ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց 3 օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդն սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 169, մաս 2:*

**Հարց 264.** Քանի՞ օրվա ընթացքում է գործատուն պարտավոր աշխատողին հանձնել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը:

*- Անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է այն ընդունելուց հետո երեք օրվա ընթացքում:*

*Նույն տեղում, հոդված 5, մաս 4:*

**Հարց 265.** Նշվածներից ո՞րն է նպատակային արձակուրդի տեսակ:

*- Մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը:*

*Նույն տեղում, հոդված 171, կետ 2:*

**Հարց 266.** Հաշմանդամ աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին չվճարվող արձակուրդը ի՞նչ կարգով է տրամադրվում:

*- Բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան 30 աշխատանքային օր՝ տարվա ընթացքում:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 176, մաս 1, կետ 2:*

**Հարց 267.** Ի՞նչ պարբերականությամբ եւ ժամկետներում է հաշվարկվում ու վճարվում աշխատավարձը:

*- Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում եւ աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչեւ հաջորդ ամսվա 15-ը:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 192, մաս 1:*

**Հարց 268.** Քանի՞ օր առաջ եւ ի՞նչ կարգով է գործատուն պարտավոր նախազգուշացնել փորձաշրջանը չանցած աշխատողին՝ աշխատանքից ազատվելու մասին:

*- Գործատուն կարող է մինչեւ փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ձեւով ծանուցելով նրան:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 93, մաս 1:*

**Հարց 269.** Ո՞ր աշխատանքն է համարվում համատեղությամբ կատարվող աշխատանք:

*- Հիմնական աշխատանքից ազատ ժամանակ, միեւնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքը:*

*Նույն տեղում, հոդված 99, մաս 1:*

**Հարց 270.** Ո՞ր օրն է աշխատողը պարտավոր աշխատանքի անցնել:

*- Աշխատանքային պայմանագրում նշված օրը:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 85, մաս 3:*

**Հարց 271.** Նշված հիմքերից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

*- Կողմերի համաձայնությամբ:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, 1 կետ:*

**Հարց 272.** Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

*- Աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 2:*

**Հարց 273.** Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

*- Աշխատողի նախաձեռնությամբ:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 3:*

**Հարց 274.** Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

*- Գործատուի նախաձեռնությամբ:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 4:*

**Հարց 275.** Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

*- Աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչելու դեպքում:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 5:*

**Հարց 276.** Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

*- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 6:*

**Հարց 277.** Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին քանի՞ օրով կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ աշխատանքային տարվա ընթացքում:

*- Ոչ ավելի, քան 60 օր տեւողությամբ:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 176, մաս 3:*

**Հարց 278.** Նշվածներից ո՞րն է նպատակային արձակուրդի տեսակ:

*- Չվճարվող արձակուրդը:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 171, կետ 5:*

**Հարց 279.** Ո՞ր դեպքում կարգապահական տույժը կարող է հանվել:

*- Եթե մինչեւ մեկ տարին լրանալը աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում եւ բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 230:*

**Հարց 280.** Ո՞ր դեպքերում ամենամյա արձակուրդից հետ կանչելիս աշխատողի համաձայնությունը չի պահանջվում:

*- Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» հոդված 166, մաս 2:*

**Հարց 281,** Որքա՞ն է աշխատաժամանակի շաբաթական առավելագույն տեւողությունը:

*- Աշխատաժամանակի նորմալ տեւողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 139, մաս 1*

**Հարց 282.** Ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին աշխատանքային առաջին տարում ամենամյա արձակուրդը ե՞րբ է տրամադրվում:

*- Ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին ամենամյա արձակուրդը տրամադրվում է սովորողների ամառային արձակուրդի ժամանակ, այդ թվում՝ աշխատանքային առաջին տարում, անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ աշխատողներն սկսել իրենց աշխատանքը*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 164, մաս 6*

**Հարց 283.** Որքա՞ն է աշխատաժամանակի առավելագույն տեւողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը:

*- Աշխատաժամանակի առավելագույն տեւողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի եւ սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:*

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 139, մաս 3*

## *«Հաշվապահական հաշվառման մասին»* ՀՀ օրենք

**Հարց 284.** Հաշվապահական հաշվառման կարգավորման գործում ինչի՞ համար է պատասխանատու կազմակերպության ղեկավարությունը:

*- Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու եւ ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար:*

*«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1:*

**Հարց 285.** Ինչի՞ համար է պատասխանատու հաստատության գլխավոր հաշվապահը:

*- Հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու համար:*

*«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 2:*

***շարունակությունը էջ 17***



# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 16*

## *«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին»* օրենք

**Հարց 286.** *«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին»* օրենքի համաձայն՝ ո՞վ է պատասխանատվություն կրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու համար:

*- Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:*

*«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 16 մաս 3*

**Հարց 287** *«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին»* ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞րն է համարվում Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր:

*- Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր է համարվում դրանց՝ ըստ պատկանելության հանձնելու օրը:*

*«Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» օրենք, հոդված 20, մաս 3*

**Հարց 288.** *«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին»* ՀՀ օրենքի համաձայն՝ ե՞րբ է կազմակերպությունը պարտադիր անցկացնում ակտիվների եւ պարտավորությունների գույքագրում:

*- Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելուց առաջ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով, ինչպես նաեւ կազմակերպության վերակազմակերպման եւ (կամ) լուծարման դեպքերում կազմակերպությունը պարտադիր անցկացնում է ակտիվների եւ պարտավորությունների գույքագրում:*

*«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենք, հոդված 14, մաս 1*

## *«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»* ՀՀ օրենսգիրք

**Հարց 289.** Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

*- Իրավախախտման վնասակար հետեւանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:*

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 33, կետ 2:*

**Հարց 290.** Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

*- Իրավախախտում կատարելը անչափահասի կողմից:*

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 33, կետ 4:*

**Հարց 291.** Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

*- Մեկ տարվա ընթացքում կրկին նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից:*

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 34, կետ 2:*

**Հարց 292.** Ո՞ր ժամկետում եւ դեպքում է անձը համարվում վարչական տույժի չենթարկված:

*- Եթե վարչական տույժի ենթարկված անձը տույժի կատարումն ավարտելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր վարչական իրավախախտում չի կատարել:*

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 38:*

**Հարց 293.** 18 տարին լրացած անձի կողմից երեխային ոչ սթափ վիճակի հասցնելը՝

*- Առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:*

*«Վարչական իրավախախտում- ների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 177:*

## *«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին»* ՀՀ օրենք

**Հարց 294.** Նշվածներից ո՞ր մարմնի որոշմամբ պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ:

*- Միայն հիմնադրի:*

*«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 5:*

**Հարց 295.** Ի՞նչ իրավունք ունի պետական կազմակերպությունը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի նկատմամբ:

*- Օրենքին, հիմնադրի որոշումներին եւ (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու եւ օգտագործելու:*

*«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 2:*

**Հարց 296.** Պետական կազմակերպությունն իրեն ամրացված գույքը ո՞ր դեպքում կարող է պետության անունից հանձնել վարձակալության:

*- Եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ:*

*«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին » ՀՀ օրենք, հոդված 5, մաս 3:*

**Հարց 297.** Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են՝

*- հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:*

*Նույն տեղում, հոդված 8, մաս 1:*

**Հարց 298.** Նշվածներից ո՞ր մարմինը կարող է հանդիսանալ պետական կազմակերպության հիմնադիր:

*- Միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության:*

*«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 2:*

**Հարց 299.** Լիազորված պետական մարմինը՝

*- Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:*

*Նույն տեղում, հոդված 14, մաս 2, ենթակետ գ:*

**Հարց 300.** Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ՝

*- Եթե լրացել է նրա 65 տարին:*

*Նույն տեղում, հոդված 16, մաս 3, ենթակետ բ:*

**Հարց 301.** Նշվածներից ո՞ր մարմինը իրավունք ունի հետ վերցնելու պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

*- Հիմնադիրը:*

*Նույն տեղում, հոդված 5, մաս 2:*

**Հարց 302.** Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

*- Նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը:*

*Նույն տեղում, հոդված 16, մաս 3, ենթակետ է:*

**Հարց 303.** Ի՞նչ պետք է ներառի պետական կազմակերպության կանոնադրությունը

*- պետական կազմակերպության գործունեության առարկան եւ նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.*

*Նույն տեղում, 11-րդ հոդված, կետ գ*

**Հարց 304.** Ի՞նչ պետք է ներառի պետական կազմակերպության կանոնադրությունը

*- պետական կազմակերպության կառավարման մարմինները, դրանց կազմը եւ լիազորությունները.*

*Նույն տեղում, 11-րդ հոդված, կետ դ*

**Հարց 305.** Ի՞նչ պետք է ներառի պետական կազմակերպության կանոնադրությունը

*- պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը.*

*«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 11-րդ հոդված, կետ զ*

## *«Տարվա լավագույնները»* մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների եւ անցկացման կարգ

**Հարց 306.** Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագրային առաջարկը կարող է ուղղված լինել՝

*- գնահատման այլընտրանքային ձեւերի ներդրմանն ու կիրառմանը:*

*«Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների եւ անցկացման կարգ, կետ 14, 1-ին ենթակետ:*

**Հարց 307.** Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագրային առաջարկը կարող է ուղղված լինել՝

*- դասավանդման այլընտրանքային, նոր մեթոդների ներդրմանն ու կիրառմանը:*

*«Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների եւ անցկացման կարգ, կետ 14, 1-ին ենթակետ:*

**Հարց 308.** Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագիրը կարող է ուղղված լինել՝

*- առարկայական հեղինակային ծրագրերի մշակմանն ու կիրառությանը դպրոցական բաղադրիչի շրջանակներում:*

*«Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների եւ անցկացման կարգ, կետ 14, 1-ին ենթակետ:*

**Հարց 309.** Ոչ ամբողջական ծրագրային առաջարկների պարագայում, քանի՞ օր է տրվում բացակայող փաստաթղթերի ներկայացման համար:

*- մինչեւ երեք աշխատանքային օր:*

*Նույն տեղում, կետ 17:*

## 16.02.2023 թ. N216-Ն որոշում. Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիր

**Հարց 310.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.

*- Մշակում եւ Հաստատության կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) հաստատմանն է ներկայացնում Հաստատության զարգացման ծրագիրը, դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը, խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հաստատության արտաքին եւ ներքին գնահատման արդյունքները:*

*«ՀՀ կառավարության՝ 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 2*

**Հարց 311.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.

*- Պլանավորում է Հաստատության աշխատանքը՝ մշակում է Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը եւ ներդպրոցական վերահսկողության պլանը:*

*Նույն տեղում, 1-ին բաժին, կետ 1, ենթ. 4*

**շարունակությունը էջ 18**

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 17*

**Հարց 312.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ապահովում է Հաստատության զարգացման ծրագրի, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան աշխատանքային պլանի, ներդպրոցական վերահսկողության պլանի, կրթական ծրագրերի, ուսումնական առարկաների ծրագրերի, թեմատիկ պլանների, Հաստատության կանոնադրության պահանջների կատարումը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 7*

**Հարց 313.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Պաշտոնների անվանացանկի եւ պաշտոնների նկարագրի համաձայն անցկացված մրցույթի արդյունքում աշխատանքի է նշանակում ուսուցիչների, ընտրում եւ նշանակում է մանկավարժական կադրերին, էլեկտրոնային կառավարման եւ դասավանդման ապահովման մասնագետին եւ գործավարին (օգնական), իր տեղակալներին, մասնաճյուղի, մեթոդական միավորումների ղեկավարներին, նրանց հետ կնքում եւ լուծում է աշխատանքային պայմանագրերը, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր, կատարում աշխատանքի բաշխում:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 9*

**Հարց 314.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Իրականացնում է հսկողություն առարկայական մեթոդական միավորումների աշխատանքների համակարգման նկատմամբ, ղեկավարում է մանկավարժական խորհրդի աշխատանքները եւ աջակցում է Հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքներին:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 17*

**Հարց 315.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ համապատասխան իրավական ակտով հաստատում է Հաստատության ուսումնական պլանը, դասաբաշխումը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, ներդպրոցական վերահսկողության պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, ինչպես նաեւ տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների մանկավարժական աշխատողների կիսամյակային, տարեկան հաշվետվությունները եւ աշխատանքային տարեկան պլանները:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 18*

**Հարց 316.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Կազմակերպում է Հաստատության էջի վարումը դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ԴԿՏՀ):*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 21*

**Հարց 317.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Կառավարում է Հաստատության սովորողների համակազմը՝ լիցենզիայով սահմանված չափով, բացառությամբ բոլոր այն բնակավայրերի Հաստատության, որը տվյալ կրթական աստիճանում կրթություն իրականացնող միակ պետական Հաստատությունն է:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 32*

**Հարց 318.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Մշտադիտարկում է Հաստատության սովորողների հետ անցկացվող ցանկացած պարապմունք:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 40*

**Հարց 319.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է՝

*- Պատասխանատու է Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման, էլեկտրոնային մատյանի լրացման աշխատանքների, դասավանդման որակի եւ սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի եւ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող աշխատողներին մեթոդական շարունակական օժանդակության ապահովման համար:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 1*

**Հարց 320.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է՝

*- Իրականացնում է ուսումնական պարապմունքների իրականացման նկատմամբ հսկողություն եւ մշտադիտարկում? համաձայն Հաստատության ներդպրոցական վերահսկողության պլանի: Ներկայացնում է առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 3*

**Հարց 321.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է՝

*- Վերահսկում եւ ապահովում է համակցված/հեռավար ուսուցման կազմակերպման բովանդակային գործընթացը ուսուցման կազմակերպման համակարգում:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 5*

**Հարց 322.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է՝

*- Իրականացնում է Հաստատության մանկավարժական աշխատողների (այդ թվում՝ սկսնակ) մասնագիտական զարգացմանն ուղղված վերապատրաստումների ընթացքի, արդյունքների, սովորողների առաջադիմության վրա դրանց ազդեցության նկատմամբ հսկողություն եւ ներկայացնում է հաշվետվություն մանկավարժական խորհրդին:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 7*

**Հարց 323.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է՝

*- Կանոնակարգում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ սանիտարական նորմերին եւ կանոններին համապատասխան:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 8*

**Հարց 324.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ապահովում է դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը եւ անհատական ուսուցման պլանի (այսուհետ՝ ԱՈՒՊ) մշակումը եւ պահպանումը սովորողի անձնական գործում, վերահսկում է իրականացման եւ գնահատման գործընթացը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 12*

**Հարց 325.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ղեկավարում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող խմբի աշխատանքները:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 13*

**Հարց 326.** Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների եւ դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է՝

*- Աջակցում է մասնագիտական կողմնորոշման միջոցառումների իրականացմանը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 3*

**Հարց 327.** Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների եւ դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է՝

*- Աջակցություն է տրամադրում սովորողներին եւ ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում եւ արտակարգ իրավիճակներում արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 6*

**Հարց 328.** Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների եւ դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է՝

*- Կանոնակարգում եւ վերահսկում է երկարօրյա ուսուցման կազմակերպական աշխատանքները, ապահովում է սովորողների կյանքի եւ առողջության պահպանման համար անհրաժեշտ պայմանները, կազմում երկարօրյա խմբի (խմբերի) աշխատանքի կարգացուցակը եւ աշխատանքի տարեկան պլանը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 7*

**Հարց 329.** Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների եւ դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է՝

*- Կազմակերպում եւ ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, այդ թվում՝ խմբակների, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 8*

**Հարց 330.** Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների եւ դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է՝

*- Աշխատանք է տանում սովորողների բարեվարքության կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հանրային վերահսկողությանը. հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության եւ վարքի նկատմամբ, նպաստում նրանց գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ձեւավորմանը, դաստիարակում մարդասիրություն եւ հայրենասիրություն:*

*Նույն տեղում, 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 12*

**Հարց 331.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է՝

*- Իրականացնում է դասավանդած առարկայի թեմատիկ պլանավորում այն դասարանների համար, որտեղ իրականացնելու է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ համաձայն Հաստատության տվյալ ուսումնական տարվա դասաբաշխման:*

*Նույն տեղում, 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 1*

**Հարց 332.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է՝

*- Իրականացնում է դասավանդած առարկայի բոլոր դասերի պլանավորումը (գրավոր) այն դասարանների համար, որտեղ իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ համաձայն Հաստատության տվյալ ուսումնական տարվա դասաբաշխման եւ իր կողմից մշակված թեմատիկ պլանի:*

*Նույն տեղում, 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 2*

**Հարց 333.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է՝

*- Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնում է համակցված/հեռավար ուսուցում:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 5*

**Հարց 334.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է՝

*- Միավորային եւ ձեւավորող գնահատման միջոցով իրականացնում է սովորողների առաջադիմության մշտադիտարկում եւ գնահատում, առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտում եւ ըստ անհրաժեշտության աջակցության տրամադրում:*

*Նույն տեղում, 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 7*

**Հարց 335.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է՝

*- Մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան կրթության կազմակերպմանը՝ ըստ կրթական աստիճանների եւ առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՈՒՊ-ի:*

*Նույն տեղում, 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 10*

***շարունակությունը էջ 19***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 18*

**Հարց 336.** Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ուսումնասիրում է սովորողի ցածր առաջադիմության, կարգապահական խախտումների, ինչպես նաեւ սոցիալապես ակտիվ անձի ձեւավորմանը խոչընդոտող, միջանձնային հարաբերություններում առաջացած խնդիրների հոգեբանական պատճառները եւ կազմակերպում համապատասխան կանխարգելիչ աշխատանքներ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 5-րդ բաժին, կետ 1, ենթակետ 6*

**Հարց 337.** Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքային գործառույթներից է՝

*- Մասնագիտական կողմնորոշման նպատակով, որպես մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամ, բացահայտում է սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածքը, կարողությունները, ընդունակությունները, նախասիրությունները, հակումները, հետաքրքրությունները, պահանջմունքները, դրդապատճառները՝ կիրառելով հոգեբանամանկավարժական ախտորոշող մեթոդներ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 5-րդ բաժին, կետ 1, ենթակետ 13*

**Հարց 338.** Հանրակրթական ուսումնական հաստատության նախնական զինվորական պատրաստության եւ անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկ) աշխատանքային գործառույթներից է՝

*- Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ միասին կազմակերպում է ներդպրոցական ռազմամարզական եւ քաղպաշտպանության միջոցառումներ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 8-րդ բաժին, կետ 1, ենթակետ 6*

**Հարց 339.** Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարի աշխատանքային գործառույթներից է՝

*- Աջակցում է սովորողների եւ մանկավարժական աշխատողների ինքնակրթության կազմակերպմանը, մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացմանը՝ տարբեր կրիչների վրա պարունակվող (գրքային ֆոնդ, էլեկտրոնային կրիչներ) տեղեկատվության տրամադրման միջոցով:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 9-րդ բաժին, կետ 1, ենթակետ 2*

**Հարց 340.** Հանրակրթական ուսումնական հաստատության լաբորանտի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ուսուցիչների հետ միասին բացահայտում, դիտարկում, հետազոտում է սովորողների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային եւ հոգեբանամանկավարժական խնդիրները:*

*Նույն տեղում, 10-րդ բաժին, կետ 1, ենթակետ 3*

**Հարց 341.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ըստ Հաստատության տնօրենության եւ ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնում է սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարում վերլուծություններ:*

*Նույն տեղում, 11-րդ բաժին, կետ 1, ենթակետ 8*

**Հարց 342.** Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի աշխատանքային գործառույթներից է՝

*- Մասնակցում է Հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին՝ ուսուցիչներին դասի գործընթացում առավել արդյունավետ աջակցություն տրամադրելու նպատակով:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 11-րդ բաժին, կետ 1, ենթակետ 16*

**Հարց 343.** Հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային կառավարման եւ դասավանդման ապահովման մասնագետի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ուսուցչի մշակած առցանց բովանդակության շարունակական մշտադիտարկում, տրամադրում է աջակցություն էլեկտրոնային կրթական ռեսուրսների բարելավման ուղղությամբ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 12-րդ բաժին, կետ 1, ենթակետ 16*

**Հարց 344.** Հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային կառավարման եւ դասավանդման ապահովման մասնագետի աշխատանքային գործառույթներից է՝

*- Առցանց դասերի դասալսումներ եւ հետադարձ կապի տրամադրում:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 12-րդ բաժին, կետ 1, ենթակետ 17*

**Հարց 345.** Հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային կառավարման եւ դասավանդման ապահովման մասնագետի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ապահովում է ուսուցման կազմակերպման համակարգում ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքների համապատասխանությունը էլեկտրոնային ուսուցման սկզբունքներին եւ չափորոշչային պահանջներին:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 12-րդ բաժին, կետ 1, ենթակետ 22*

**Հարց 346.** Հանրակրթական ուսումնական հաստատության խմբակավարի աշխատանքային գործառույթներից է՝

*- Հաստատության կրթական աջակցությունների համակարգողին է ներկայացնում ամսական, կիսամյակային եւ տարեկան հաշվետվություններ խմբակի իրականացրած աշխատանքների վերաբերյալ՝ ապահովելով խմբակի փաստաթղթաշրջանառության եւ հաշվետվողականության պահանջները:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 13-րդ բաժին, կետ 1, ենթակետ 5*

**Հարց 347.** Հանրակրթական ուսումնական հաստատության խմբակավարի աշխատանքային գործառույթներից է՝

*- Պատասխանատու է խմբակի ծրագրի իրականացման համար:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 13-րդ բաժին, կետ 1, ենթակետ 6*

**Հարց 348.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ապահովում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի բաժինների լրացման/խմբագրման ժամկետների պահպանումը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը սահմանելու եւ կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրը ներդնելու մասին» N 65-Ն հրամանով հաստատված կարգին համապատասխան:*

*Նույն տեղում, 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 22*

**Հարց 349.** Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է՝

*- Ապահովում է ուսուցման կազմակերպման համակարգում (այսուհետ՝ ՈՒԿՀ) գործարկումը եւ համակցված/հեռավար ուսուցման կազմակերպումը:*

*Նույն տեղում, 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 24*

**Հարց 350.** *«Հանրակրթության մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի անցած դպրոցում ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալ:

*- Հաստատության տնօրենի տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա կրթության ոլորտի բարձրագույն կրթություն եւ մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 2, կետ 3*

**Հարց 351.** *«Հանրակրթության մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի անցած դպրոցում ո՞վ կարող է աշխատել կրթական աջակցությունների եւ դաստիարակչական աշխատանքների համակարգող:

*- Կրթական աջակցությունների եւ դաստիարակչական աշխատանքների համակարգողի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ կամ բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 3, կետ 3*

**Հարց 352.** Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավար:

*- Հաստատության գրադարանավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կամ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում գրադարանային կամ մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 9, կետ 3*

**Հարց 353.** Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկ:

*- Հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն, սպայական կոչում:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 8, կետ 3*

**Հարց 354.** Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության լաբորանտ:

*- Հաստատության լաբորանտը պետք է ունենա բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 10, կետ 3*

**Հարց 355.** Ո՞վ կարող է զբաղեցնել հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային կառավարման եւ դասավանդման ապահովման մասնագետի պաշտոնը:

*- Հաստատության էլեկտրոնային կառավարման եւ դասավանդման ապահովման մասնագետի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կամ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն եւ իր պաշտոնի նկարագրին համապատասխան՝ տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների կիրառմանը:*

*Նույն տեղում, 16.02.2023թ. բաժնի, գլուխ 12, կետ 3*

**Հարց 356.** Խմբակավարը ո՞ւմ է ներկայացնում ամսական, կիսամյակային եւ տարեկան հաշվետվություններ խմբակի իրականացրած աշխատանքների վերաբերյալ՝ ապահովելով խմբակի փաստաթղթաշրջանառության եւ հաշվետվողականության պահանջները.

*- Հաստատության կրթական աջակցությունների համակարգողին:*

*Նույն տեղում, բաժնի, գլուխ 13, կետ 1, ենթակետ 5*

**Հարց 357.** Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության խմբակավար:

*- Հաստատության խմբակավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում (առողջ ապրելակերպի խմբակավարը կարող է ունենալ նաեւ հոգեբանի որակավորում) կամ բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժնի, գլուխ 13, կետ 3*

**Հարց 358.** Կառավարման նոր համակարգի անցած դպրոցում ո՞վ կարող է զբաղեցնել հանրակրթական ուսումնական հաստատության համակարգողի պաշտոնը:

*- Հաստատության համակարգողի պաշտոնը կարող է զբաղեցնել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն եւ վերջին 7 տարվա ընթացքում քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 1, կետ 3*

**Հարց 359.** Կառավարման նոր համակարգի անցած դպրոցում ո՞վ է հաստատում կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձեւավորված տարիֆիկացիան:

*- Հանրակրթական ուսումնական հաստատության համակարգողը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 1, կետ 1, ենթակետ 4*

**Հարց 360.** Ո՞վ է կազմում եւ լիազոր մարմին ներկայացնում հանրակրթական ուսումնական հաստատության նախահաշիվը:

*- Հանրակրթական ուսումնական հաստատության համակարգողը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 1, կետ 1, ենթակետ 6*

***շարունակությունը էջ 20***

# Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի թեստավորման միջոցով հավաստագրման հարցաշար

*սկիզբը՝ էջ 19*

**Հարց 361.** Ո՞վ է աշխատանքներ տանում հաստիքային ֆինանսական եւ դրամարկղային կարգապահության, վարչատնտեսական եւ այլ ծախսերի նախահաշիվների, հաշվապահական հաշվառման հաշիվներից պակասորդների, այլ գործառույթների օրինականության խստիվ պահպանումն ապահովելու ուղղությամբ, միջոցներ ձեռնարկում հաշվապահական փաստաթղթերը պահպանելու համար, սահմանված կարգով դրանք արխիվացնում:

*- Հանրակրթական ուսումնական հաստատության հաշվապահը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 2, կետ 1, ենթակետ 9*

**Հարց 362.** Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության հաշվապահ:

*- Հաստատության հաշվապահի պաշտոնը կարող է զբաղեցնել հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող կամ վերջին հինգ տարվա ընթացքում հաշվապահի՝ առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ ունեցող անձը:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 2, կետ 3*

**Հարց 363.** Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության խոհարար:

*- Խոհարարի պաշտոնին նշանակվող անձը պետք է ունենա առնվազն միջնակարգ, կամ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն, կամ խոհարարի աշխատանքի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:*

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 5, կետ 3*

## Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու եւ ազատելու մասին 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման

**Հարց 364.** Սովորողին դպրոց ընդունելու հրամանին հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, դպրոց ընդունված երեխայի տվյալները դպրոցի տնօրենը մուտքագրում է՝

*- ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԿՏԱԿ-ի կողմից վարվող «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 4*

**Հարց 365.** Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կարող է կատարվել՝

*- սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում /դասարանում/*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 5*

**Հարց 366.** Օտարերկրյա քաղաքացիների երեխաների ուսուցման լեզուն

*- ծնողներն ընտրում են ինքնուրույն:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 7*

**Հարց 367.** Ոչ պետական դպրոցից սովորողի ազատումը կարող է կատարվել՝

*- ծնողի եւ տվյալ դպրոցի միջեւ կնքված պայմանագրի դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանելու դեպքում:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 28*

**Հարց 368.** Մասնագիտացված դպրոցից սովորողի ազատումը կարող է կատարվել՝

*- ծնողի եւ տվյալ դպրոցի միջեւ կնքված պայմանագրի դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանելու դեպքում:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 28*

**Հարց 369.** Ո՞ր դասարանում է կազմակերպվում մինչեւ տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 8 տարին լրացած դպրոց չհաճախած երեխայի կրթությունը:

*- 1-ին դասարան՝ ընդհանուր հիմունքներով,*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 29*

**Հարց 370.** Ինչպե՞ս է կազմակերպվում մինչեւ տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 9-ից մինչեւ 15 տարին լրանալու դեպքում կամ մինչեւ մեկ տարի ուսումն ընդհատած սովորողի կրթությունը:

*- Իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր՝ գիտելիքների գրավոր ստուգման արդյունքում:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 29*

**Հարց 371.** Ինչպե՞ս է կազմակերպվում 19 տարին չլրացած կրթական 3-րդ աստիճանի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ դասարաններում ուսումն ընդհատած լինելու դեպքում սովորողի կրթությունը:

*- Ուսումնառությունը շարունակում է ընդհատած ժամանակահատվածից:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 29*

**Հարց 372.** Ինչպե՞ս է իրականացվում սովորողի ընդունելությունը այն բնակավայրերում, որտեղ հաստատությունը տվյալ կրթական աստիճանում կրթություն իրականացնող միակ պետական հաստատությունն է:

*- Բոլոր այն բնակավայրերում, որտեղ հաստատությունը տվյալ կրթական աստիճանում կրթություն իրականացնող միակ պետական հաստատությունն է կամ տվյալ համայնքում գործող պետական հաստատություններում տվյալ կրթական աստիճանի համար լիցենզիայով տրված բոլոր տեղերը զբաղված են, սովորողի ընդունելությունը հաստատություն իրականացվում է? անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 8*

**Հարց 373.** Ո՞վ ունի առաջնահերթություն՝ դպրոց ընդունվելիս:

*- Տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին գործուղման հետեւանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաների:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 12, ենթակետ 3*

**Հարց 374.** Ինչպե՞ս է իրականացվում երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաների հայտագրումը նույն հաստատությունում:

*- Երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը հաստատություն ապահովում է մյուս երեխայի (երեխաների) ընդունելությունը նույն հաստատությունում՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 15*

**Հարց 375.** Ինչպե՞ս են հայտագրում իրենց երեխաներին առաջնահերթության իրավունք ունեցող եւ այդ իրավունքից չօգտված քաղաքացիները:

*- ընդհանուր հիմունքներով:*

*ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 17*

## Պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը սահմանելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թ. հունվարի 20-ի N 17-Ն հրաման

**Հարց 376.** Ո՞ր մարմինն է ընդունում պետական ուսումնական հաստատության անվանակոչման մասին որոշումները:

*- Ընդունում է ուսումնական հաստատության լիազոր մարմինը ըստ ենթակայության:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 1*

**Հարց 377.** Ի՞նչ տեղեկատվություն պետք է պարունակի հաստատության անվանակոչման մասին առաջարկությունը:

*- Ուսումնական հաստատության (կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, մանկավարժական եւ ծնողական խորհուրդների) համաձայնությունը:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 3*

**Հարց 378.** Ուսումնական հաստատությունները կարող են անվանակոչվել՝

*- ուսումնական հաստատության շրջանավարտների անունով՝ ուսումնական հաստատության միջազգայնացման եւ վարկանիշը բարձրացնելու գործում ունեցած ավանդի, հայրենիքին մատուցած ծառայությունների համար:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ. N 17-Ն հրաման, կետ 12*

**Հարց 379.** Ո՞ր դեպքում չի կարող իրականացվել անվանակոչություն:

*- Հանրային շահերի համար ռիսկեր ստեղծող գործունեություն իրականացրած կամ դրա մեջ ընդգրկված ֆիզիկական անձանց անվամբ կամ կազմակերպությունների անվանումով չի կարող:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 14*

**Հարց 380.** Ո՞ր դեպքում չի կարող իրականացվել անվանակոչություն:

*- Հանցագործությունների համար դատապարտված անձանց անվամբ, եթե դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 14*

**Հարց 381.** Ե՞րբ կարող է փոխվել անվանակոչված ուսումնական հաստատության անվանումը:

*- Առնվազն 20 տարի հետո՝ համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում՝:*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ. N 17-Ն հրաման կետ 18*

***շարունակությունը՝ հաջորդիվ***





# «Արագածոտնի պատմամշակութային նկարագիրը»

Կայացավ *«Արագածոտնի պատմամշակութային նկարագիրը»* հանրապետական գիտաժողովը, որը նվիրված էր **Միհրան Ասատրյանի** հիշատակին:

Գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմն ու Թալինի համայնքապետարանը, նպատակ ուներ Արագածոտնի մարզին վերաբերող պատմական, աշխարհագրական, հնագիտական, ժողովրդագրական, պատմամշակութային ժառանգության պահպանման եւ արդի այլ հիմնախնդիրները վերհանմամբ ներկայացնել Արագածոտնի դերը տարածաշրջանի պատմական գործընթացների ձեւավորման եւ զարգացման համատեքստում, համախմբել գիտության, կրթության ու մշակույթի տարբեր ոլորտների ներկայացուցիչներին՝ հաղորդակից դարձնելով նրանց վերոնշյալ բնագավառներում կատարվող հետազոտություններին եւ աշխատաքներին, ինչպես նաեւ ընկալման եւ իմաստավորման համապատկերում նպաստել Արագածոտնի մարզի պատմամշակութային նկարագրի ձեւավորմանը, նոր ուսումնասիրությունների, գիտամշակութային բացահայտումների ու ձեռքբերումների հանրահռչակում եւ ամրապնդում, համապատասխան ոլորտների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, համախմբում, մեկտեղում եւ տեղեկացվածության աստիճանի բարձրացում:

Գիտաժողովն ացկացվեց Թալին խոշորացված համայնքի Վերին Սասնաշեն բնակավայրում՝ Սուրբ Վարդան եկեղեցու մերձակա *«Սասնաբերդ»* հանդիսությունների սրահում:



Թալինի տարածաշրջանի Վերին Սասնաշեն գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1850 մ բարձրության վրա, Աշտարակ մարզկենտրոնից մոտ 42 կմ հյուսիս-արեւմուտք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 65 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա: Վերին Սասնաշենի Սուրբ Վարդան եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը կատարվել է 2018 թ. մայիսի 12-ին: Եկեղեցու կառուցման աշխատանքներն ընթացել են արմատներով մշեցի, սակայն ՌԴ Արմավիր քաղաքում ծնված ու մեծացած **Սարկիսյան** եղբայրների հովանավորությամբ: Սարկիսյանների նախնիները գաղթել են Արեւմտյան Հայաստանից, եկել-հաստատվել Վերին Սասնաշենում: Սարկիսյան եղբայրների ջանքերով Մշո Սուրբ Առաքելոց վանքի ավերակներից քարեր են բերվել եւ տեղադրվել եկեղեցու հիմքերում ու ճակատային մասերում: Սուրբ Վարդան եկեղեցու դուռն էլ Սուրբ Առաքելոց վանքի դռան ընդօրինակմամբ է պատրաստվել: Եկեղեցին խաչաձեւ հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է՝ շարված նարնջագույն սրբատաշ տուֆաքարերով: Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները հոգում է Թալինի հովվության հոգեւոր հովիվ, Արժանապատիվ **Տեր Թադե քահանա Թախմազյանը:**

2019 թ. նոյեմբերի 12-ին Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ **Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի** ձեռամբ հանդիսավորապես կատարվել է եկեղեցու օծման արարողությունը:

Ի գնահատումն **Ալեքսանդր Սարկիսյանի** աստվածահաճո գործունեության՝ **Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով բարերարին շնորհվել է Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու *«Սուրբ Ներսես Շնորհալի»* շքանշան: Վերին Սասնաշեն գյուղի զարգացմանն ուղղված գործունեության եւ ցուցաբերած աջակցության համար էլ համայնքի ավագանու որոշմամբ բարերարին շնորհվել է *«Վերին Սասնաշենի պատվավոր քաղաքացի»* կոչում:

Եկեղեցուն հարակից տարածքում Սարկիսյան ընտանիքի տրամադրած միջոցներով կառուցվել է նաեւ *«Սասնաբերդ»* հանդիսությունների սրահը, որտեղ էլ անցկացվեց գիտաժողովը:

